

ԱՐԵՒԵԼԵԱՆ
Մ Ա Մ Ո Ւ Լ

ՀԱՆԴԷՍ ԵՄՍԵԱՅ

ՉՈՐՐԱՐԴ ՅԱՐԻ

1874

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՊԵՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱՌԹԻՒՆ

ԿԱԼԵՍ

ԳՐԱՑ ԵՒ ԲՐԱՑ

ԿՐԹՈՒԹԵԼՆ ԻՆՏԻՄԸ ՀԱՅՈՒՑ ՄԵԶ

ՊԵՐՄԱՆԻ ՀԱՅԻ

ԸՄԻ ՂԱՂԱՄՆԵՐԻ ՕՐԻՈՐԻ ՏԻՐՈՒՄԻ Գ. ՍՊՐՈՅԵԼՆ

ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՄԱՐԶԱՅ ԵՒ ՅՆՆԱ

ՀԱՅ ԸՆԹԵՆՔԱՅԻՆ

ԲԵՂԼԻՔԱՅԻՆ

ԱՄՈՒՐԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐ

ԶՄԻՒՈՒՆ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԻՏԻԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Դ. ՏԱՐԻ

1874

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԴԱՏԱՌԹԻՒՆ*

Էապէս սահմանափակ եղաւ հին ժամանակի երկու ամիսէն նշանաւ
և որ ազգաց ողին : Հոմերի ատեն յոյներն ինքեանս իբրև որոշ ցեղ մը
չէին սկսած նկատել : Սիլփոնի և Ելիպտոսի պերճութեանց և խմած
տութեան վրայ դեռ ևս կերպ մը մանկական հիացումով և երկիւղա-
ծութեամբ կ'նայէին : Դիւրին չէ որոշել թէ ինչ պատճառներով և
ինչ աստիճանով իրենց կարծիքն այլայլութիւն կրեց : Իրենց պատմու-
թիւնը՝ Տրոյից պատերազմէն սկսեալ մինչև Մարականը՝ այնպէս
մթութեամբ ծածկուած է որ հազիւ ուրեմն ճշմարտութեան յիշող

*Տե՛ս երես 329, 369, 417, 465:

ցան և աղօտ նշոյլներ կ'նշմարտին : Յոյնք իբրև մի ազատ ժողովուրդ
կ'համարէին ինքեանս : Յատուկ կրօնական ծէսեր ունէին , և հասա-
րակային օրինաց յատուկ սկզբունք , որոց անմասն էին օտարականները :
Իրենց ամէն քաղաքական դրութեանց մէջ , թէ միասլետական , թէ
ազնուապետական և թէ հանրապետական , առհմային մի զօրաւոր
նմանութիւն կար : Քսէրքսէսի նահանջէն և Մարդոնիոսի անկմանէ
ետք՝ ազդային դուռըութիւնն Յունաց և Բարբարոսաց մէջ մի կատա-
րեալ բաժանում հաստատեց : Գերազոյն տոհմէ մարդիկ կ'նկատէին
ինքեանս յաղթողները , մարդիկ որ , շրջաբնակ ազդաց հետ իրենց ու-
նեցած յարաբերութեանց մէջ՝ պարտաւոր էին ուսոյունել և չէ թէ ուս-
նիլ : Իրենց շրջանէն դուրս մի բան չէին փնտրեր . ոչ ինչ չէին փոխ
առնուր . ոչ ինչ չէին թարգմաներ : Չենք յիշեր՝ Օդոստոսի դարէն ա-
ռաջ՝ մի յոյն հեղինակ որ իր լեզուէն զատ մի լեզուով ընթերցանու-
թեան արժանի մի բան գրելու կարծիք յայտնած լինի : Ազդային փա-
ռաց ներշնչած զգացումներն ազդային քայքայման ժամանակ լիովին
անհետ չեղան : Գերութեան և ապականութեան երկար դարեր նոյն
զգացումներուն յարած մնացին յոյնք : Հռոմի գրականութեան խոյ՝
անոր զինուց առջև խոյս տուող , և սուսերին ներքև խոնարհող
յոյնք՝ արհամարհոտ աչօք կ'նայէին : Վօղէր կ'ըսէ իր հազարա-
ւոր պարսաւադրոց միոյն մէջ թէ ինք առաջին անձն եղաւ զազդու-
ացոց յայտնող թէ Անկլիա՝ Մալպօրու դքսէն զատ՝ ուրիշ շատ ա-
նուանի անձեր յառաջբերած է : Մինչև վերջին ժամանակներն մի այս-
պիսի ծանօթութեան կարօտ կ'երևին յոյնք իրենց տիրապետներուն
նկատմամբ : Անոնք քաջ կ'ճանչէին Պօղոս Էմփիլիօսը , Սիլլան և Աե-
սարը , բայց Կիկերոնի և Վիրգիլիոսի վրայ իրենց ունեցած տեղեկու-
թիւններն՝ հաւանական է որ Շէքսպիրի վրայ Պուալօին ունենալիք
կարծիքէն տարբեր չէին : Գիոնիսիոս՝ լատինական բանաստեղծու-
թեան և ճարտասանութեան ամենէն փառաւոր ժամանակը կ'ապրէր :
Նա մի քննաբան էր , և իր դարուն համար մի ճարտար քննաբան :
Նա հռոմէական լեզուն ուսաւ , անոր ուսումնական մարդոց հետ ծա-
նօթացաւ , և անոր պատմութիւնը բանաբաղեց : Մական այնպէս կ'ե-
րևի թէ նա ուսած լինի անոր գրականութիւնն իբրև կարևոր մի միայն
անոր հնութիւնները լուսաբանելու համար , կ'երևի թէ միայն հասա-
րակային յիշատակիւններ կարկացեր է և մի քանի հին տարեգիրներ :
Մի անդամ , եթէ լաւ կ'յիշենք , մի անդամ միայն Դենիսիոսի վկայու-
թիւնը մէջ կ'բերէ , մի ստուգաբանական լնդիր լուծելու համար :

Հռետորութեան արուեստին վրայ մի շատ բան դրած ունի, և սակայն Արիւթրոնի անունը յիշատակած չէ :

Հռոմայեցիք զլուխ կ'ծռէին յոյն ազգի մեծամիտ պահանջումներուն, թէ և այս ազգը կ'ստէին : Իրենց գիւցաղներդակ բանահիւսն՝ որչափ որ կառավարութեան և պատերազմի արհեստից մէջ զլիաւորութիւնն իրենց կ'յատկացնէր, բայց ճաշակի, ճարտարախօսութեան և գիտութեան մասին իրենց տկարութիւնը կ'սոստովանէր : Գրադէտ մարդիկ յունական լեզուն քան իրենց մայրենի հռոմէականն լաւ ևս իմանալ կ'կեղծէին : Պոմպոնիոս՝ մտաւորական բնիկութեամբ արթնացի լինելն նախապատիւ կ'համարէր քան թէ հռոմի քաղաքական վիճաբանութեանց մէջ կարելի եղած փառաց հասնիլ : Իր մեծ բարեկամն յունական քերթուածներ և յիշատակադրեր յօրինեց : Ամենուն յայտնի է որ Պետրարդ այն աղօր լեզուն որով իր նուպները դրած է, իբրեւ բարբարիկ բարբառ կ'նկատէր, և իր համբաւը վստահեցաւ այն ողորմելի լատինական վեցոտեան ոտանաւորներուն որ՝ վերջին չորս դարու մէջ՝ հալիւ թէ չորս ընթերցող դտան : Մի շատ նշանաւոր հռոմայեցի մարդիկ՝ ըստ երեցութիւն՝ մի և նոյն արհամարհանքն կ'զայցին իրենց բնիկ լեզուին համար՝ յունականին հետ համեմատելով : Այս պաշարումն ընդ երկար տևեց : Յուլիանոս այնքան համակիր էր յոյն լեզուին որչափ Մեծն Քրիստէրիկ զաղղիականին, և կ'երևի թէ իր կառավարած տէրութեան լեզուով անկարող էր իր միտքը պարզապէս բացատրել :

Նոյն իսկ լատին մատենադիրներ՝ որ այս աստիճան պաշարեալ չէին, իբրեւ միակ գիտութեան աղբիւր կ'սեպէին Յունաստանը : Յունաստանէն առին իրենց քերթուական կանոնները, և արդարեւ՝ ուրիշ ամէն ինչ որ հնար էր այս մասին արտահանել : Յունաստանէն փոխ առին իրենց իմաստասիրութեան սկզբունքն ու բառգիրքը : Ա'երևի թէ դոյզն ինչ ուշադրութիւն ուրիշ ազգաց դպրութեան իսկ չեն ընծայած : Զոր օրինակ, Եբրայեցւոյ նուիրական գրեանքն՝ որ լոկ իբրեւ մարդկային գործեր նկատուելով՝ քննաբանին, հնախօսին և իմաստասիրին առջև մեծ արժէք ունին, բոլորով իմբ անտես մնացած կ'երևին անոնց : Հրէական կրօնին հանդամանքն և Քրիստոնէութեան արաղ ծաւալումն իրենց ուշը զրաւեցին : Հրէից դէմպատեբազմըրին, օրէնք դրին քրիստոնէից դէմ : Բայց չբացին Երբէք Մովսէսի գիրքը : Ժուլէնալ պարսաւանօք կ'յիշատակէ Հնդկաստանը : «Ասեմի» վրայ գրող հեղինակն զովէստով կ'յիշատակէ զայն, բայց երկուքն ալ սխալ վկայու-

թիւններ մէջ կ'բերեն։ Այս անտարբերութիւնը զարմանալի է արեւմտեան, երբ նկատենք որ եբրայական Գրոց մէջ ինչ վտեմ բանաստեղծութիւն, ինչ հետաքրքրական պատմութիւն, երկնային բնութեան, և մարդոց ընկերական պարտուց վրայ ինչ սքանչելի և բնիկ տեսութիւններ կ'գտնուին. երբ նկատենք որ՝ կառավարութեան անդուռ ու շահութեան առարկայ եղող այս երկու աղանդներն սոյն Գրոց մէջ իրենց հաւատոյ և բարեպաշտութեան կանոնները կ'փնտռէին։ Պատճառն այս կ'երևի թէ յոյնք միայն իրենց վրայ կ'ըմբռնէին և հռոմայեցիք միայն իրենց և յունաց վրայ կ'ըմբռնէին։ Գրական մարդիկ քամահեղու ի բոց կ'մերթէին մոռածութեան և բացատրութեան այն ձևերն որ իրենց զմայելելու սովորած բաներէն այնքան տարբեր էին։ Ասոր հետեանքն եղաւ մոռածութեան անձկութիւն և նոյնութիւն։ Իրենց միտքն լոկ ներքուստ կ'սնանէր և հետեապէս ամուլ և աղիկար կը մնար։ Քայքայուն բունին վրայ զեղեցիկութեան և առոյղութեան կենսատու բողբոջ պատուաստող չեղաւ։ Լոկ կարգ մ'երեւոյթներու մտադիր լինելով, լոկ մի տեսակ աղւորութեան ճաշակ ունենալով՝ մարդկային իմացականութիւնն թռչեցաւ։ Պատահական համադրիչութիւններ ընդհանուր կանոններու վերածուեցան. նախադաշարումներ բնաղւազններու հետ շփութեան։ Մարդու վրայ, ընկերական մասնաւոր մի վիճակի մէջ գտնուող մարդու վրայ, կառավարութեան վրայ, աշխարհիս մի անկիւնը հիմնեալ մի կառավարութեան վրայ՝ շատ ուղիղ դիտողութիւններ եղած են, բայց մարդու վրայ իբրեւ լոկ մարդ, կամ կառավարութեան վրայ իբրեւ լոկ կառավարութիւն՝ շատ քիչ բան գիտցող կար։ Խմաստասիրութիւնն մի մնայուն վիճակ ստացաւ։ Շէնքին վրայ՝ մերթ ի յուրին, մերթ ի բարին, թեթեւ փոփոխութիւններ տեղի ունէին, բայց ոչ ոք կ'սորհէր հիմունքը քննելու։

Կեսարներու համատարած ինքնակալութիւնն, որ փոքր առ փոքր ամէն ազգային բնիկ հանգամանք ջնջեց, և պետութեան հեռաւորագոյն գաւառներն իրարու նմանեցուց՝ աւելի ևս սաստկացուց չարիքը։ Քրիստոսի երրորդ դարուն վերջն՝ մարդկային ազգի ապական խիստ ահռելի և տխուր կ'երևէր։ Պաշտօնական արտաքին ձևեր հաստատուեցան, որ Դսկուրալիսն պէս՝ շքեղ և սնոսի էին։ Գրեթէ մի անտեսանելի վեհասկիտ, նշաններով և տիտղոսներով զարդարուած անթիւ աւագանի, հռետորներ որ բիւր անգամ ըսուած բաներ կը կրկնէին, դպրոցներ ուր միայն դարերով առաջ զիստուած բաները կ'ուսընէին — ահա այս էր մարդկային սեռի ամենէն լուսաւորեալ մասը։

սին կառավարութեան և կրթութեան համար 'ի դործ գրուած միջոցները : Աղգերն աւելի մեծ աղէտք կրելու վտանդի մէջ էին՝ քան ինչ որ տարափոխիկ, բորբոքիչ և աւերիչ հիւանդութիւններ կարող են բերել — այս է մի խարխուլ, անկայուն, անդամալոյծ երկայնակեցութիւն, չինական քաղաքակրթութիւն, գիւրին սլափ լինելը ինձ նշանակել թէ քանի՛ քանի նմանութեան կէտեր կան Գիօկէնտիանոսի հպատակաց և Երկնային Պետութեան (չինական) ժողովրդոց մէջ, իւր, շատ տարիներ, ոչ ինչ չուսան և չմոռցան մարդիկ, ուր կառավարութիւնը, դատախարակութիւնն, ուր կենաց բոլոր գրութիւնն մի արարողութիւն է . ուր գիտութիւնը կ'մոռնայ մեծնալ և բազմանալ, և հողին մէջ պահուած տաղանդին, կամ ղենջակի մէջ փաթկուած կշեռքին պէս ոչ կ'սպառի և ոչ կ'աւելնայ :

Երկու մեծ յեղափոխութիւններ, մին բարոյական, միւսը քաղաքական, մին ներքուստ, միւսն արտաքուստ, այս թմբորութիւնն ընդհատեցին : Մի միայն այս խնդրոյն յարաբերութեամբ նկատելով՝ Քրիստոնէութեան յաղթանակը Առաքաշտութեան վրայ մեծ կարեւորութիւն ունեցաւ : Աործանեց նա բարոյականի հին գրութիւնն, և ասոր հետ բնաղանջական հին գրութեանց մեծ մասը : Ճարտարախօսութեան նոր նիւթեր ընծայեց ատենաբանին, և հակաճառութեան նոր առարկաներ՝ արամբանին : Նա մանաւանդ մի նոր սկզբունք ներմուծեց, որու աղբեղութիւնը շարունակ ներդրածեց մարդկային ընկերութեան ամէն մասերուն վրայ : Անշարժ ժողովուրդներն վեր 'ի վայր գրգռեց, և բազմամարդ պետութեան մը հանդարտ և անհոգ խուժանին հանրապետական մրկալի կիրքն արծարծեց : Ինչ որ հարստահարութիւնն անկարող էր ընելու՝ հեբեաթիստութեան երկիւղը կատարեց, այլափոխեց մարդիկն՝ որ մի բռնակալէ ուրիշ բռնակալի լծին ներքեւ անոյնելու սովորեր էին՝ իբրեւ անբան հօտ, ու ջերմնւանդ օխոյեաններ և կամակոր ապստամբներ դարձուց : Ճարտասան լեզուներ՝ որ բառական դարերէ 'ի վեր լուր էին, Գրիգորի բեմէն սկսան որոտալ : Փիլիպեան դաշտերուն մէջ արդէն մարտծ ոգին Աթանասի և Ամբրոսիոսի հողւոյն մէջ վերածնաւ :

Բայց այս դարմանն ևս բուական զօրաւոր չէր հիւանդութեան դէմ : Անկարող եղաւ Աղստանդնուպօլսոյ պետութիւնն արգիլել, մի կարճատե բուռն բորբոքումէ ետքը՝ այնպիսի թմբորութեան մէջ գլորելու, որու զուգակշիռ մի հաղիւ թէ պատմութիւնը կ'ընծայէ : Անդ կ'աւաններ որ մի փայլուն ընկերութիւն, մի ընկերութիւն որու մէջ

բէնադրական իրիտ կնճռոտ և նուրբ մի դբութիւն հաստատուած էր : ուր պերճութեան արուեստից մարդիկ հմուտ էին , ուր երեւելի հին մատենագիրներու գործերն կ'պահէին և կ'ուսանէին , գրեթէ հազար տարիէ 'ի վեր կ'շարունակուէր առանց դիտութեան մէջ մի մեծ գիւտ հնարելու , կամ մի գիրք յօրինելու որ հետաքնին հետազոտներէ զատ մարդիկ կարգային : Պակաս չէին նաև խռովութիւններ և վիճաբանութիւններ և անվերջ պատերազմներ , և այս բաներն՝ թէև ինքնին վատ , սովորաբար իմացականութեան զարգացման ձեռնտու եղած են : Բայց ասոնք ընկերութիւնը վրդովեցին առանց զարգայնելու : Զրեւրը պզտորեցան , բայց մի բուժական ներդործութիւն չբերին : Այս վրդովմունքն մի ելեկտրականեալ դիակի պալարումներն ու ծեքծեքումն ներն էին և թէ մի ըմբշական մարդու պայքարները :

Արեւմտեան պետութիւնն այս ողորմելի վիճակէն ազատեցաւ մի ամենէն վայրագ և աւերիչ այցելութեամբ որով Աստուած իր արարածները պատժած լինի — այս է հիւսիսային աղպաց տըշաւանքը : Մի այսպիսի դարման հարկ էր մի այսպիսի ախտի համար : Ինչպէս որ ումանք ըսին , Լոնտօնի հրդեհը բարիք մ'էր : Նոյն բանը կարող ենք ըսել հումբական երկրներու հասած ասպատակութեան համար : Զննեց այն մահաշունչ խորշերն որոց մէջ բարոյական մեծ ակտից որոմները թաղուն կ'մնային , սրբեց մթնոլորտ մ'որ մարդկային մտաց կայտառութեան և առողջութեան դժնդակ էր : Հազարամեայ բարբարոսութեան մէջ ընկղմեց Եւրոպան որպէս զի Չինաստանի ճակատադրէն ազատի :

Վերջապէս այս սոսկալի մաքրագործութիւնը կատարուելով՝ մարդկային աղլի երկրորդ քաղաքակրթութիւնն սկսաւ , այնպիսի պարադայից մէջ որ մի հզօր ասպհոյութիւն կ'տային որ այնուհետև ոչ պիտի յետադիմէ և ոչ դադարի : Այժմ Եւրոպա մի մեծ աւատական հասարակութիւն դարձաւ : Իր բազմաթիւ տէրութիւններն միջազգային օրինաց և մի հասարակ կրօնի դիւրին զօդերով միացան : Սակայն իրենց հիմնարկութիւններն , իրենց լեզուներն , իրենց բարբն ու վարքը , զրականութեան մէջ իրենց ճաշակը , իրենց դաստիարակութեան եղանակները բոլորովին տարբեր էին : Իրենց յարակցութիւնը բաւական սերտ և փոխադարձ ծանօթութեան զարգացման նպատաւոր , բայց չէր այնչափ սերտ որ բնական զգացմանց և կարծեաց բարբառը ջնջէ :

Եւրոպայի աղպաց մէջ հաստատուած բարոյական և մտաւորական այս կշիռն շատ աւելի կարեւոր է քան թէ քաղաքական իշխանութեան

կշիւը : Արդարեւ՝ մինք տրամադիր ենք մտածելու որ այս վերջինն է ապէս տրժէք ունի միայն անոր համար որ առաջինը պահպանելու կ'օգնէ : Քաղաքակիրթ աշխարհն այսպէս ազատ մնաց բնաւորութեան մենակերպութենէ որ ամէն զարգացման ազէտաբեր է : Անոր մէն մի մասն ուրիշ մէն մի մասէ ցոլացած լուսով լուսաւորեցաւ : Մըցումն պործունէութեան զրդուեց , մինչդեռ մենավաճառութիւնն անտարակոյս դանդաղութիւն պիտի ստանձառէր : Բարոյական դիտութեան մէջ եղած փորձերուն թիւն յետին աստիճան աւելցաւ : Ընկերութիւնն ու մարդկային բնութիւնը՝ փոխանակ միակ գէմքով նկատուելու , բիւրաւոր տարբեր տեսակէտով կ'ներկայանայ հետագէին իմաստասիրին : Շրջակայ ազդաց բարբը դիտելով , անոնց զրականութիւնը հարցաքննելով , իր բնիկ երկրին և հին հասարակապետութեանց դպրութեան հետ համեմատելով՝ նա կարող կ'լինի ուղղել այն վրիպակներն որոց մէջ ամեն նէն սրամիտ մարդը կ'զլորի երբ մասնաւորէ ընդհանուր եղրակացութիւն կ'հանէ : Ա'սովորի նա տեղականն անգերականէն զանազանել , անցաւորը մշտնջենականէն , բացառութիւններն ու կանոններն որոշել , վրդովիչ պատճառներու ներդրածութիւնը նշանակել , միշտ ճշմարիտ և ամէն տեղ զործածելի եղող ընդհանուր սկզբունքն զատել պատահական պարզանքներէ որ , ամէն ժողովրդեան մէջ , իրարու կ'խառնուին , և որ ամենէն իմաստասէր մնաց կողմէ կ'շփոթին՝ մի առանձին ժողովրդեան մէջ :

Այս է պատճառն՝ որ՝ ընդհանրացման մէջ՝ նոր ժամանակուան մատենագիրներն հիները դերադանցած են : Մեր բնիկ երկրին պատմաբաններն հաւասար չունին բանադատական խորիմաստութեան և ճշտութեան մասին , և նոյն իսկ մեր պարզ բանաբաղնեւորուն զործոց մէջ ստէպ այնպիսի խորհրդածութիւններ կ'դանենք որ Թուկիդիդէսի կամ Տակիտոսի կարողութենէ վեր են :

Բայց պարտ է ըսել որ նոր պատմաբաններն և սյատուկ սխալներ ունին , որ այնչափ սերտիւ կապուած են իրենց յատուկ արժանեաց հետ , և այնքան մեծ են , որ առ հասարակ կրնայ կասկած ծագիլ թէ արդեօք զրականութեան այս ճիւղն վերջին քսաներկու դարու միջոցին մէջ չնհոռնի թէ ոչ կորուստ :

Վերջին ժամանակուան ամենէն լաւ պատմաբաններն ճշմարտութենէն հրապուրուեցան՝ չէ թէ իրենց երևակայութեան այլ իրենց բանականութեան մէջոցաւ : Չափազանց կ'զբաղանցեն իրենց նախորդներն իրողութիւններէ ընդհանուր սկզբունք հանելու արուեստին մէջ , բայց

դժբաղդաբար ընդհանուր սկզբանց համեմատ ձևելու համար իրողութիւնները յեղաթիւրելու պահանջութեան մէջ ընկան : Մի քանի երեւոյթներ քննելով մի գրութիւն կ'հիմնեն , և մնացած երեւոյթներն կը թիւրեն կամ կ'յայտեն որպէս զի գրութեան յարմարին : Այս նպատակին հասնելու համար հարկ չկայ որ գլխովին սուտ բաներ յառաջ բերեն , մասն զի բարոյականի և քաղաքականութեան վերաբերող ամէն խնդիրներ բաղդատութեան և աստիճանի խնդիրներ են : Ամէն նախադասութիւն որ մի բացայայտ հակասութիւն չպարունակէր կրնայ՝ ըստ կարելոյն՝ ճշմարիտ լինիլ , և եթէ անոր 'ի նպատակած պարագաներէն մի հաւանական իրողութիւն մէջ բերուի և հաստատուի , իսկ ներհակ եղբակացութեան տանող իրողութիւնները զանց առնուին կամ վեր 'ի վերոյ յիշուին , այն առեն խնդիրն ապացուցուած կ'երևի : Ամէն մարդկային բնաւորութեան և դործառնութեան մէջ բարոյ և չարի մի խառնուրդ կայ — մի քիչ չափազանցութիւն , մի քիչ զանցաւորութիւն , մակդիրներու մի ճարտար կիրառութիւն , մի արթն և հետաքնն կասկածողութիւն մէկ կողմանէ ակներև վկայութեան դէմ , մի վայելուչ դիւրահաւանութիւն միւս կողման ամէն տեղեկութեան կամ աւանդութեան , ստ հետիւ կարող է Լօտ եպիսկոպոսն մի սուրբ ընել , կամ Հէնրիկ Գ-ը մի բռնակալ :

Այս տեսակ այլ ընդ այլոյ բանք նոր պատմաբաններու մեծակշիռ դործոց մէջ առատ են : Հերոգոտոս՝ իբրև անփոյթ վրայ՝ իր պատմութիւնը կ'աշտմէ , և կողմնակցութեամբ ու նախապաշարմունքով վառուած , հաւաստութեան հաստատեալ կանոնաց անտեղեակ , և իր երդման պարտաւորութեանցն անհմուտ , իր երեւակայածն տեսած և ըսած բաներուն հետ կ'շփոթէ , և իրողութիւններ , տեղեկութիւններ , ենթադրութիւններ , քմածին լուրեր միահաղոյն մէջ կ'բերէ : Հիւմմի կատարեալ փաստաբան է : Առանց հաստատապէս յայտնելու քան զոր կարող է ապացուցանել , իր գատին նպատաւոր եղող պարագայից մեծ կարեւորութիւն կ'ընծայէ , մինչդեռ թեթեւակի կ'սահի անոր աննպատակող պարագայից վրայէն . իր յատուկ վկաներուն դովետ ու խրախոյս կ'վտանէ . անոնց արժանահաւատութեան արատ բերող խնդիրներն 'ի քննի կ'առնու , անոնց ըրած հակասութիւնները կ'ըստաբանէ , և անոնց ստուղծութեան վրայ պայծառ և յարակից մի քաղուած կ'տայ : Իսկ միւս կողմէն իր գատին հակառակ ինչ որ մէջ բերուի կ'հետազօտէ անհնարին անաչառութեամբ . ամէն կասկածելի պարագայ իր ձեռքը մեկնութեան և կշտամբանաց նիւթ կ'դառնայ , ինչ որ անըօր է ուրա-

նալ կ'չափաւորէ , կամ՝ լուծեամբ կ'անցնի . մինչև անդամ երբեմն ղեղձումներ կ'ընէ , բայց այս նենգալի պարզմտութեամբն աւելի ևս կ'բազմապատկէ իր իմաստակութեանց դումարը :

Հիւմիլիշեցիներ՝ իբր դատուն ամենէն յաջողակ և ժողովրդային մատենադիրք . բայց այս սխալմտութեան մեր ամենէն նշանաւոր պատմաբանները փոքր ի շատէ են թափայ կ'գտնուին : Ախպարն՝ ի մասնաւորի , մեծ սրբաւանայ արժանի է : Բայց բազմաթիւ յանդուորներուն մէջ քան զամենն մեղապարտ կ'սեպուի Պ. Միլլֆրէրտ : Յօժարակամ կ'խոստովանինք որ իր տաղանդն ու ճարտարամտութիւնը մեծ ծառայութիւններ մատուցին պատմութեան : Յունաստանի արդի պատմադիրներէրը սովորեք են զրել այնպէս որպէս թէ աշխարհ՝ վերջին հաշար վեց հարիւր տարուան մէջ՝ ոչ ինչ չէ ուսած : Աւելի լուսաւոր մի դարու իմաստասիրութեամբ գէպքերը լուսաբանելու տեղ , հին աշխարհն լոկ ինքն իր մէջ դատելու ելան . . . : Բոլոր հին պատմութիւններն հաւատարապէս վաւերական սեպեցին : Գրեթէ բոլորովին իրարու հետ շփոթեցին այն պատմագիրն որ գէպքեր պատմեց որոց ինք ներկայ էր , և այն՝ որ հինգ հարիւր տարի ետք՝ մի իմաստասիրական վէպ յօրինեց մի ընկերութեան համար որ նոյն միջոցին մի կատարեալ փոփոխութիւն կրած էր : Բոլորն ալ յունական էին , ուրեմն բոցնոյն ալ ստոյգ : Պլուտարքոսը Թուրկիկեմէն բաժնող դարերն ոչ ինչ կ'երևէին այնքան հեռաւոր դարու մէջ ապրող մարդոց : Ժամանակի հեռաւորութիւնն մի սխալմունք պատճառեց որ երբեմն տեղոյն հեռաւորութիւնն յառաջեկած սխալմանց նման է : Անն բարեմիտ կանայք որ կարծեն թէ Հնդկաստանի մէջ բոլոր ժողովուրդը միասին կ'ապրի , և Վալիաթա դացող մի բարեկամի ձեռօք Պոմպէյ բարեներ կ'յուզարկեն : Նոյնպէս Ռօլէնի և Պարթէլէմի համար բոլոր դասական հեղինակները ժամանակակից էին :

Անշուշտ Պ. Միլլֆրէրտ պատմութիւնը շատ զարդացուց . ցոյց տուաւ մեզի որ յունարէն և լատիններէն զրող մարդիկ երբեմն սուտ բաներ ալ գրեցին , ցոյց տուաւ մեզի որ հին պատմութիւնն այնպէս կ'ընայ պատմուի որ ոչ միայն ուսանողներու հրապոյր , այլ քաղաքապետներու դասեր կ'ընայ ընծայել : Իր գիրքը բոլորովին աղատ է թատերական ներդործութիւն , ուռած փրած զգայումներ աղլելու փափաքէն , որ նոյն նիւթին վրայ գրուած զործերը թունաւորած է : Բայց թիւ և միանգղամայն անդուծ մի գրութեան համար ունեցած խանդը՝ զործին ամէն մէկ երեսին մէջ ճշմարտութիւնը բունաբարելու գրգռեց զինքը :

Հանրապետութեան աննպաստ խօսքեր անյողողղ դատահալութեան և կծու ու դառն ոճով մէջ կ'ըսէրէ նա : Ինչ յանցանք որ տեսնուի մի միապետի , կամ ազնուապետութեան վրայ՝ մեծ դղուշութեամբ մեղմելու կ'ճգնի . . . : Հեղինակը մի և նոյն խօսքին մէջ երկու դէպք կ'պատմէ , նոյն վկայութեան վրայ հիմնեալ է անոնց ճշմարտութիւնը . բայց մին իր սիրական դուրսութեան նպատակով է և միւսն անոր հետ անհամաձայն կ'երևի : Մին կ'ընդունի և միւսն 'ի բայ կ'ընդունի :

Մի դուրսութեան յարմարելու նպատակաւ պատմութիւնը թիւրեւտովորութիւնն՝ բոլորովին անօգուտ մի մեղութիւն չէ քաղաքական դիտութեան համար ինչպէս որ ակզբան կ'երևի : Այս ընթացքը բռնող մատենագիրները փաստաբաններու նմանցուցինք , և կարող ենք յարել , թէ իրենց հակասական ստույգութիւններն , զիրար կ'ընդունեն ու կ'ուղղեն : Ամէն լուսաւոր ազգեր կ'ընդունին թէ մի ատենան դատաստանական մի խնդիր արդարապէս կրնայ վճուել , երբ երկու ճարտարախօս մարդոց կարելի եղածին չափ անարդար կերպով պատճառաբանելը մտիկ ընէ , նոյն խնդրոյն ընդգէմ և 'ի նպաստ . և տրամադիր ենք հաւատալու որ այս կարծիքը ճիշտ է : Իրաւի՝ երբեմն ամենէն վատթար փաստը թերեւս լուսաւորին երևի դերադոյն ճարտասանութեան և հնարադիտութեան շնորհիւ , բայց դարձեալ դատաւորը պիտի ստիպուի խնդրոյն երկու տարբեր կողմը քննել : Ստոյգ է որ մի կարեւոր դիտողութիւն չկրնար բոլորովին անտես անցնիլ :

Պիտի շարունակուի :



ԿՈՎԿԱՍ*

Միւս օր՝ հին Քունիսը տեսնելու անցուցի , և ինձի համար ձիեր և ուղեցոյց մը պատրաստ կային : Նոր Քունիսկէն ելնելով՝ օձաձև երկայն շաւիղ մը բռնեցի , արշաւակի անցայ լեռնադաշտին անհարթ կատարէն , կատար մ'որ թեթև մը վար կ'հակի , և որու վրայ մարդ կա-

*Տե՛ս երես 425 :

ըող է բնակիլ առանց շրջակայ դահաւանդը նշմարելու, և ի վերջէ հասայ այն վայրն ուր ազատութեան համար Համիլի մղած պայքարները ուն յետին յիշատակները կ'երևին : Արդարեւ այս յիշատակները մեծ բաներ չեն, անշէն զիւղ մը, և ծաւակոյցալ մը վրայ քար մը : Այս զիւղը բնակիւ էր Համիլ, այս քարին վրայ նստեր էր Ազիլասի փոխարքայն՝ Պարիպէնսի : Կի քանի վայրկեան ձիավարելով՝ զիւրն էր զիւղէն վար դանուած վիճն հասնիլ : Իմ ուղեցոյցս, որ Համիլի զօրադնդին մէկ վաղեմի պատերազմին էր, ալէխառն ու հողմահար զինուոր մը, յայտնեց ինձ թէ ինչպէս երկու ուսական դումարտակներ, այս ահագին դահաւանդն ի վեր մտալ լեզով — որու վրայ կարծես թէ այժմ մ'անցամ կուտան մը պանելու անկարող է — զիւղին բոլորակը զանուղ բլուրները շրջապատեցին, մինչդեռ Համիլի զօրականներն՝ կուռեկէն յովնած գալբած՝ անսոյգ ապահովութեան մէջ կ'ընանային : Երկարօրէն և խանդաղին խօսեցաւ նա լեռնական դիպրալին վրայ, անոր ձիավարական ճարտարութիւնը գովեց, պատմեց Իմամին և միշտ վիպասաններու զիւցաղն Հաճի Մուրատի մաղապուր խուսափումները, և թէ ինչպէս Համիլ երկու անգամ Ռուսաց ձեռքն ընկնէին ետեւ՝ խոյս տալու հնարը գտեր էր : Իրաւի՝ Համիլ իր փառաւոր ազգարիզին վերջին տարիներն այնքան ընկած էր զօրութենէ, մինչդեռ Ռուսաց սպանալեօք և խոստումներով մի առ մի զիւղերը դրաւ լէն ետեւ՝ լոկ այս զիւղը ձգեր էին իրեն, որ Քունիսի ճամբուն վրայ՝ ժամանակին մէկ անուանի առաջալ՝ Ալի՝ անոր վրայ յարձակելով՝ զինքը կողոպտեց և բաւական մեծ փառականք բրտ :

Հետեւեալ օրն՝ մեր ճամբան Քունիսի հի սիւսային սեպեբուն ներքե կ'դանուէր, և այնպիսի ռզլանք ունէր որմէ անկի իական այժմ մը անցնելու պիտի զժկամակը : Աւերջասլո՝ մինչդեռ Քունիսի բարձունքը դեռ ևս ետեւէն մեզի մօտ կ'երևէր, մեր գիմացը լեռ մը սկսաւ բարձրանալ որու վրայ անցրի նշան մը չէր տեսնուեր : Ահ ու քող բռնեց զիս՝ մտածելով թէ ինչպէս անոր վրայ պիտի մտալէնք, և հարցուցի Հայ ուղեցոյցին թէ արդեօք պէտք է անցնիլ. բայց ճամբաներն իր մտայ այնպիսի ճակատադրային պաշարում մ'ազդեր էին, որ նա պարզապէս ինձ պատասխանեց. « Եթէ հարկ է մտալցի ելնել, պէտք է որ ելնենք » : Սակայն վտակի մը մօտեցանք, և որովհետեւ յայտնի էր որ այս վտակը լեռին կառարէն չէր կարող անցնիլ, հետեցողի որ անոր բոլորակը շաւիղ մը պիտի գտնուէր. բայց կ'սխալէի — շաւիղն լեռին մէջէն էր : Իմ ուղեցոյցներս շիտակ պէս ի դահաւանդը քշե-

ցին, և առաջնոյն տեսքը ժայռի մը ծերային մէջ կորուսի. ապա միւսն անհետ եղաւ, և ես ալ ետեւէն դացի: Օձապոստոյ առջեք մ'էլը՝ դիւթէ ութսուն կանդուն երկայն, և տեղ տեղ այնքան նեղ որ ձեռքս տարածելով կարող էի երկու կողման ժայռերուն գլխի. դիւթէ ամենուրեք ապառաժներն կախուած էին, բայց ուր ուրեմն կ'ընդունին որ կապոյտ երկնից նշույլը տեսնեմ, նոյնպէս հազիւ իրարմէ անջատուած ձիւ գահերն որ ուղղահայեաց կ'բարձրանային. այս էր Կովկասու հրաշալեաց մին, Գարա-Տաղի անցքը, որ իրաւի բնութեան հետաքրքրաշարժ գործոց մէջ նշանաւոր է, և ասոր նմանը քիչ տեսած եմ:

Փոքր ինչ հեռու՝ ուրիշ գետակ մը, Ավարեան Գոյոտյուն, Գարա-Տաղի ամրոցն և անհրաժեշտ կարմիր կամուրջը կ'երեւին: Ամրոցը թողլով յետուսա՝ գետակին կողմը գիմեցինք, որ լեռի մը բոլորտիքը կ'հոսի: Ուրիշ կարմիր կամուրջ մ'անցանք, նոյնպէս ժամեր դահաւանդ մը մաղլէլով՝ ելանք հիանալի սեպածեւ ժայռերու վրայ և անկից դալարաւտ հովիտ մ'որ մեզի Կունդակի (Խունցախի) բերդը հանեց:

Լեղկաց ցեղն շրջակայքը կ'բնակին: Ավարք՝ 500,000 Լեղկաց մէջէն միակ ցեղն է որու լեզուն երկրին մեծ մասին մէջ տարածուած է իբրեւ ազաւ լեզու. ըստ որում այլ և այլ ձորերու մէջ իւրաքանչիւր դիւղի իրատուկ բարբառն ունի, թէ և Ավարք բաղմամբիւ չին: Մարդասոնց երկիրը մանեւուն անմիջապէս կ'բաբարանքի փոփոխութիւն մը կը նշմարէ, և արժանապէս կ'ներկայացունեն ասոնք երբեմն մեծ ազդն ուրու անունը կ'կրեն:

Կօի և Մակոկի սլաւերն ընդունայն խուզարկէին ետեւ — որոց աւերակներն Գարբառտի մօտ կ'երեւին, և ինձի ըսեր էին թէ Կունդակէն կ'անցնին, այս է Յոնաց Կաղէն — վերստին ուղի ընկայ Պոտլիս (Պոտուս) գնալու՝ Աբեմոնեան Տաղտանի կառավարութեան ամրոցանիստ քաղաքը: Ճամբան՝ որ ըստ մասին դահաւանդի մ'երկայնքն է, պատուական էր մըլնի համար, բայց վերջապէս վայր մը հասանք ուրեւրեսուն կանդունի չափ տեղ ձիւնք հալեր անձրեւներէն և սառիւ թափեր էր, մինչդեռ ուս գինուորներ՝ ըստ սովորականին երդիլով, իրենց պաշարը չալկած՝ ժայռերէն վեր կ'ելնէին կատուներու պէս: Ի վերջէ՝ Տըլի սիրուն անունն ունեցող դիւղ մ'ըջնելով՝ մեզի պոյծեամ և վայրի հնդկահատ մեծարեցին, և անկից զարկինք Գոյոտյունի վերջնին, այս է Անդի գետը, և անոր հետեւելով մինչև Պոտլիս հասանք, ուսական բնակութիւն մ'որ մէկ կողմէն սովորական ընիկ քարաշէն, պաղ և անլոյս դիւղերու միացած է, և ամէնքն ալ լայնարձակ, դեր-

բուկ գաշալի մը վրայ շինուած են , որոց շուրջը միշտ մշուշով ծածկուած լեռներ կան , և այս լեռներէն ահազին ձեան հասաւածներ ցցուած կ'երևին :

Այս տեղ տեսայ վրացի ազնուականին նահապետական և հիւրասէր կենցաղը : Ամէն ոք՝ ըստ աստիճանի՝ կարգաւ դեպքին սեղանին շուրջը նստաւ . նախ՝ տանտէրերը , հիւրերը , զօրականները , բնիկ ցեղապետներն , ապա ստորին մարդիկն և սպասաւորները . բայց ամէնքը նոյն կերակուրները ճաշակեցին , նոյն դինին , ֆախէթիի պայծառ և պատուական դինին , որ վրաց աղբիւր կենսատու արիւնը կրնայ կոչուիլ , ամէնքն առատօրէն խմեցին : Օր մը՝ Էնդէլլի լիճն երթալու ելանք , լիճ մ'որ Ձէչնոտանի մէջ կ'գտնուի՝ Տաղտանու սահմանէն դուրս : Մեզի ուղեկից էին քսանի չափ մարդիկ : Քանի յառաջ կ'երթայինք՝ ամէն զիւրի բնակիչներն դուրս ելնելով մեզի կ'ղիմարէին հեծեալ և սպառազէն , այնպէս որ երբ բլուրներուն գաղաթը հասանք առնուաղն 300 անկամոն զօրօք շրջապատած էինք : Այն ինչ ելանք տափակ լեռնախոյրն՝ որու վրայ էր լճակը , ձիաւորներն սկսան ամէն կողմն արշաւել , երկվարայն երթեւէն հրացան պարպել և նշան տուել ինչ բանի որ իրենց ուշը կ'դատէր , թամբերու վրայ կենալ և տեսակ տեսակ մարդանք կտատրել : Վերադարձին՝ ամենուն սիրելի ցեղապետը իրենց յատուկ լեզուաւ քանի մը խօսք ըսաւ իրեն հրաժարական բարեւ . և ամէնքը ցրտեցան բարձր աղաղակ մ'արձակելով , նոյն օրն առն կտատրել , իրենց զէնքն 'ի հանդէս հաներ և իրենց զգեստներն ու երբեմնեանցից տուեր էին ամենուն զարմանքը դրոշմելով : Անդիք՝ ելծէ լաւ դինուին , խիստ ահաբեկու անկանոն զօրացունդ մը կարող են կազմել , և ուրք՝ անոնց այս գինուսրական տրամադրութիւնը գիտնալով՝ դուն գործեցին անոնց սիրտը շահիլ որ օդուաւ քաղեն . վստայն դի Անդիք՝ 'ի բաց առեալ ափ մը սակաւ լիւ հին Շամիլեանք՝ բոլորովին նուաճեալ կ'երևին , և այս միտքն ունին՝ թէ կարելի եղածին չափ ընդ երկար պատերազմութեն ետեւ՝ լաւ ևս է որ մարդ ինքզինքը սպառեալ խոտովանի քան թէ անհամբոյր գտնուի :

Պոսլիսէն 'ի Թիֆլիզ՝ սովորական ճամբան Ձէչնոտանէն Վլադիկաւաւ է , և ասկից ալ սկսեք է սուրհանդակ բռնել : Բայց աւելի կարճ և զրեթէ անմանօթ ճամբան ընտրեցի ես , ֆախէթիի լեռներու մէջէն : Քանի մը պահապան ուղեկիցներ առի , բոլորն ալ կարլիճ մարդիկ , և ուղի ընկայ դէպ 'ի Անախնեան Բոյսուն : Ընդ երկար ձիավարելով առաջանցանք , երբեմն զրեթէ՝ դեպքերու մէջ ուղեւորելով , երբ

բեմն անձուկ քարուղիներէ զարնելով, այնպէս բարձր որ ջրերուն ու
բոտն անլսելի էր, և մեղի արծաթեայ թելի պէս կ'երևէր հեղեղա-
տին մէջ: Ատեն տտեն մազլցի այս շախմատներէն վեր կ'ընէինք, որ
հազիւ կ'ընամարտէին ցից բլուրներու մայրաւուտ դարավէժներու վրայ
(բոլոր Տաղստան այնպէս իմն կ'երևի որ գետակներու մէջ դարափուլը
զլորի) մերթ զմերժ հասնելով կ'դիտէինք որ բնիկներէն ոմանք խոյս
կ'տային, այլք ծուռ ծուռ կ'նայէին օտարականներուն, որ թերևս
սպաններ կամ հարկահաններ լինէին, և հոսկիւ բերմն Տաղստան ա-
նուան բոլոր զօրութիւնն ըմբռնեցի «լեռներու աշխարհը»: Արդարեւ
ամէն տեղ լեռ է. չկան խիստ սեպածն ապառաժներ և գօտիներ ի-
րաւ, քանի մը տեղերէ զատ՝ բայց նոյն բուռցիկ բլուրներն ու դա-
հավէժները կ'տեսնուին, միւս ծայրը գանձուղ Շուրայի բարձրու-
թեամբ և կազմութեամբ: Տիտէն անցնելով երբեմն նշանաւոր գիւղ
մը, ուր օթեան տալինք, հովտին խորը մտանք. հեռուն կ'երևէին
մթին և պերճ անտառներ, որոց մէջէն ապառուժ սպիտակ ապառաժ-
ներ ցլուելով աւելի գեղեցիկ տեսարան մը կ'ընծայէին, մինչդեռ յուռ-
թի և ուռճալի քառերը գեղին շուշաններով, վարդածառերով, և
ձիւռն մինչև անուրձն բարձրացող դալարիով լի՝ կ'ոյսնէին թէ ո՞ր
աստիճան բարձր վայր մը հասեր էինք:

Միւս օր կանուխ ելնելով՝ կ'ուսայինք որ նոյն իրիւնն Բալարէլի
պիտի կարենանք հասնիլ, բայց մեր յայտը դերև ելաւ, և լեռներու
վրայ քնացանք: Մեր միակ սանին մէջ ոչխարի միս խաշելէն ետեւ՝
փորձ փորձեցինք նոյն անօթին մէջ թէյ եփել, բայց ոչ թէյաման և ոչ
թան ունենալով՝ ակործելի բան մը չկրցանք ստանալ. ուստի մեր կա-
պաներուն մէջ փաթթուելով կարելի եղածին չափ կրակին մօտ պառ-
կեցանք: Դառնաշուռչ էր ցուրար. 13,000 ոտք բարձր ճամբու մը
վրայ էինք: Թէև փոքր ինչ ստորին կողմնին իջանք, բայց դարձեալ
ահագին էր բարձրութիւնը: Ժամն երկու քին մօտ արթնցայ, կօշիկ-
ներս մարած կրակին մոխրին մէջ էին և մարմնոյս կէտը դրեթէ սա-
ռած: Մեր երկվարներն՝ որ երևակայութեան կենդանիներ լինելով
ըստ երևոյթին ժայռ. ու ձիւն պալարի և ջրի տեղ առեր էին, այդուն
ձեռք քնկան և խոյն ճամբայ ելանք՝ մերթ կէս հալած ձեան հիւսե-
րու մէջ տարու բերելով՝ որոնք հեղեղաւոր ծածկեր էին, մերթ սահե-
լով սառույցի հատուածի մը վրայ որ քալածայութի մը տարափը կ'ծած-
կէ, մինչև որ արևն ելնելուն՝ լեռնադաշտին կատարը հասանք: Մեր
առջև կ'պարզէր սքանչելի տեսարան մը, նսեմ, անշարժ, կապոյտ ու

Ժիրանի մշուշ մը . վայր մ'ուրիշ վայրէ կարելի չէր դանաղանել , բայց միայն երբ մութ կանաչ կէտ մը քաղքի մը դիրքը կ'այտնէր . աջ կողմէն Թիֆլիզի շուրջը կ'երևէին ցած բլուրներ , հեռուն՝ մեր դիմացը՝ Փոքր Կովկասու ձիւնասպատ սարերն , ամենաշինջօղին մէջ օդասպար , և մութ մանիշակի դոյն ամպային գիծ մը՝ ղայն կ'բոլորէր , մինչդեռ մեր ոտից ներքեւ՝ թեղօշի սև անտառներէն անդին՝ կ'գտնուէր Քվարէլի կարմիր փոքրիկ գիւղն և իր ամրոցը , քանի մը բլրամաս հեռու երևելով՝ ինչպէս աշխարհացոյց տակտակի վրայ : Իսկ Կովկասի այս մասին բոլոր դօտին շրջելով՝ տեսայ արևն որ հետզհետէ սարերը կ'լուսաւորէր իր սլայծաւ և վարդագոյն նշոյլներով , և մեզի համար միայն կ'եւէր , մինչդեռ վարը Քախէթի դեռ ևս կէս մը ստուերի մէջ էր :

Պէտքէ շարունակուի :



ՆՈՒ ԸՆՈՐՀԱԶԱՐԻ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԻԱՊԵՏ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

«Ծրագրող Գրոց եւ Ռրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ»
անուն գրքովին :

Պատուական Հայր Սուրբ ,

Ձեր ծրագրած այդ անուն զբօղիկը , որ ինձ էք նուիրած՝ իբրև Հայաստանի ընծայ ձեր աշխատասիրութեամբ ձեռք բերուած՝ մեծ դուհունակութեամբ ընդունեցի և իմ անչափ շնորհակալութիւնը , ոչ միայն այս երկու տող խօսքով կը փութամ յայտնել ձեզ , այլ ձեր ազնիւ ու ընտիր ընծայն , որ ինձ համար խիստ թանկ նշանակութիւն ունի , իմ ուսումնասիրութեան առարկայն կ'անեմ և արդիւնք էլ ձեզ կը հաղորդեմ :

Ձեր նուիրողին մերջերում ասած ունիք , Հայր սրտուական , թէ ձեր բարեկամաց մէջ ինձ էք ճանաչած այդպիսի Հայաստանի զրական թերթերի համար ճաշակ ունեցող և թէ՛ դէսլ 'ի այդպիսի աշխատասիրութեան ձեզ քաջաբերողն ես եմ եղած , շատ մեծ հաճութիւն զգացի այդ ընտրութեանդ համար իմ մասին և սրտիւ եմ համարում ինձ

Համար որ սրտաճառ եմ եղած ձեզ, պատուական Հայր, այդ յանկի գրական բեքքեր հաւաքելու անմշակ Հայաստանի կեանքէն:

Բայց ես էլ եմ պարտական հրապարակում յայտ առնել, թէ ինձմէ բիւրասպատիկ աւելի, ոչ թէ ճաշակ, այլ խոր հմտութիւն ունեցող Հայկական ուսմանց մէջ մի վախճանեալ հոգի, որու անունը ձեր զբոսական վերջաբանին վերջին երեսումը յիշած էք արժանաւոր գովեստով, պարոն Գէորգ Ախվերտեանց* որ խիստ խորերը գեղերած Ռուսական, Փրանսական, Գերմանական և Ասիական զրականութեան մէջ, և ես առաւել մեր նախնեաց քաղաքական և զրականական պատմութեան և կեանքին մէջ, այդ հանճարաւոր և իմաստուն անձն ինձ լոյս և ճաշակ է տուած Հայոց պատմական գիտութեան մէջ իր կենաց վերջին երկու տարուայ միջոցին, որու բարեկամութիւնը վայելելու բաղձն ունեցած եմ Թիֆլիզում:

Ահա ինչպէս է խօսում պարոն Գէորգ Ախվերտեանցն այդ մասին:

«Առաջարկի ժամանակից սկսված Հնդկաց Գիտանեայ և Գեմետրեսի կուռքերու Տարծնայ երկրում պաշտումն էլ որ չգնե՞ք աղաջողի տեղ, պատմութեանց էլի երեւմէ Աշախատի շատ հնուց նախական ըլին: Առաջարկի թաղաւորից Արմաիրու մահեանի քրմայետ կարգած Վահնունիք համարձակ չէին ինքերէ ինքնակամ զննելէն պաշտօնէն, թէ էս իմաստուն Պարթևի գալուց առաջ, չըլէին հնուց քրմութեան պաշտօնը կատարելումն: Անկարելի է՝ որ Վահագնի սերունդն, գեւ Արշախունեաց գալուց առաջ, չըլէ իր աստուծոյն նախնուն պատուել զննել իր սեփական Աշախատ գեղումն, որ տեղ Վահագնին վաղուց պաշտելու սովորութիւն ունենալն աւելի պարզ երևում է նրանից, որ Վահնունիք Արմաիրու քրմայետ ըլելով Արտաշիսէն Արմաիրու մահեանի համար ուղարկած պատկերներից զննելէն զաստուծոյն պատկերն . . . զԱհագն իւրեանց վարկանելով նախնի, կանգնելէն ի Տարծն յիւրեանց սեպական գեղն յԱշախատ: Նրանք թէ ես սրտովում են էս գործի համար, միայն Վահեմանեան մահեանն օրէ օր մինչև Հայաստանու քրիստոնէական հաւատով լուսաւորվին հուշարելով՝ դառնում էին Բեթաբան, լի ոսկով և արծաթով: Էսպէս

* Թիֆլիզցի պարոն Գէորգ Ախվերտեանցի վարդապետութիւնը հրատարակուած է Վուսնի Հայոց աշխարհի ամսագրումը, նրա վախճանման առթով՝ Թ. տարուայ Գ.Ա. Թուի 999—999 երեսը, նոյն ամսագրի հրատարակիչ պարոն Համբարձում Էնֆիլանտեանցի՝ վախճանելոյն մերձաւոր բարեկամի՝ երկասիրութեամբ:

Գլխանկայ ու Գեմարեայ վիշապաքաջ Վահագնի ոսկի կուռք, ոսկի տաճար ու Աստղիկան մեհակներով լիքն Տարօնայ երկրում. յատկապէս Աշտիշատու հարուստ քուրմերու ձեռքն դրվելով զարդացած սխտի ըլի մեր լեզուն, մեր թագաւորներն էլ, բոլոր ազգն էլ հեան յաճախ գալով զնալով իրանց, մանաւանդ աշտի փեղէն. շատ բաւ ու դարձուած Տարօնում սովբաժ տարիլ ու տարածել կ'ուզեն զանազան դաւառներում: Կոտայշտութեան յաճախապաշտօն Աշտիշատում գնվում է հիմն առաջին Բրիստոնէական եկեղեցոյ, ու նախ էտեղ է ուղղվում սեզան յանուն Սուրբ Խրրորդութեան ու կազմվում է մկրտութեան տաղանդ: Ամենից առաջ Տարօնայ երկիրն է լցվում եկեղեցիներով, եպիսկոպոսներով, քահանաներով, մեր հայրապետները, թագաւորներու նախարարներն էլ հեան աշխարհաստմբ սուրբ տեղիք պատուելու, էսպէս մեր կաթողիկոսներն իրանց գլխաւոր քարտուղարներով տարուան մեծ մասը կենալով էս սիրուն Աշտիշատում, որը գեղեցկութեան վրայ մնում էր Հայր մարգարեի զարմացն. շատ Տարօնայ լեզուի խօսքերու դարձուածք գործ կ'ուէին դնում իրանց դպրութեան մէջ»:

«Ես պատմադրական կարծիքովս՝ զօրեղ հանգամանքները բանի տեղ չդնելով՝ հովսրտով էլ որ մտիկ տանք Մշտ. բարբառին մեր զբաւանութեան պատմութեան մէկ դէպքն հրաւիրում է, ստիպում է մեզ՝ որ քննենք Տարօնայ երկրի Հայկական խօսքը: Մեր Բրիստոնէական դպրութեան գլուխն՝ երանելի Մեսրոպն՝ Տարօնայ դաւակ է, սրա հետ Սուրբ Գրոց թարգմանիչներն ու նշանաւոր մեր հեղինակներն՝ Խոսրենային, Մամբրէն, Գաւիթն Անյաղթ, Մուշէ վարժապետն, Յովհան Մանգակունին, կարելի է ևս Եղիշէն բնիկ Տարօնայիք են, ու Յովհան Խիւղկային, Յովսէփ Պաղնային, Եղնիկն, Արձան Արծրունին, Կորիւն, Ղևոնդն թէ և չեն երկրաւ Տարօնից, բայց հանճարեղ Տարօնեցոյ աշտիերաններն են: Հինդերորդ դարու առաջին տարիներում թէպէտ ևս պատուում է սրանցից Հայոց լեզուն ձեռքած ու բաւական զարդացած (ինչպէս ցոյց է տալիս Աղաթանգեղի պատմութիւնը, թէ իրաւ հէնց Տրդատի ժամանակին է զբաժ սա Հայերէն) էնպէս որ կարողանում են ստոյգ ու ճոխ թարգմանել Աստուածաշունչ ճոխ մատենանը, բայց իրանք էլ աշխատասիրելով Յունաց զրականութեան աղղեցութեան տալիս աճեցրել ու ճոխացրել են մեր զրաւոր լեզուն, ու անկարելի է, որ չըլին մո ծած իրանց երկասիրութեանց մէջ իրանց խօսած լեզուի ձեւերն, խօսքերն ու դարձուածն:

«Արևմտեմ» մանաւանդ վերջի հանդամանքն պիտի տոխայէ մեզ՝ որ քննենք մեր ժամանակակից Մշեցոյց խօսած լեզուն, ու նմ զխոէ կարելի է որ հնաբերով յաջողի մեզ պարզեցնել իշխող պատած դրոց անշուշտ լեզուն. շատ հովսրբասնին. ծաղիկը տակնում կարելի սիրողն կու կանգնեցրնէ ինձ ասելով, Տարօն էնվան ազգեր ու լեզուներ եկել դայցել են ու էնպէս փոխիմել են տուել բնակիչներուն իրանց բնիկ լեզուն, որ Մշոյ բոլոր գաւառն էլ որ տակնուվայ անենք, բան չենք իմանալ. Պես էլ իմ կողմիցս կ'ասեմ որ ինձ ծանօթ պատահական բարբառների մէջ միայն Մշեցոյց խօսքումն եմ տեսնում մեր դրաբառ լեզուի բուն նշան՝ հոլովակեբա նախդիւնքն են զ, ի, յ էլ բան չեմ ասում բաւերու վերջին դրուած ողորդական ու նուազական ի, է, ա, օ, ու վանկերու վրայ ։

Մէկ քանիսն խօսքերս կարշալիս, սրտանց կը ծիծաղին պարզմտութեան վրայ, ծիծաղողին էլ չվախենալով Գօշ Մխիթարայ ազգի անբարոնէութենէ, խրատ կու տամ, որ իր ծաղրանքը յետ դրած, վեր կենայ դնայ ՚ի Մուշ, մի կ երկու երեք տարի Տարօնում զիւզէ զիւզման գալով, զլուխ դնէ Մշեցոյ խօսած լեզուն ու ժամանակով հազորդէ ազդակիցներուն իր քննութիւնը. Մուշ ասելով հասկնում եմ Տարօնայ գաւառն, հետն էլ հին Տարուբերան հաճանդն իւր հին սահմաններովն ։*

Իբրեւ է որ, Հայր սուրբ, պսօրութայ Հայ մարդն իբրեւ մարդկային բնկերականութեան անգամ իր անձնական և բնկերական կեանքովք քարոզքելու համար պէտք ունի գարու թեանց, ուսմանց և դիտութեանց մէջ գեղերուիլ ու մշակուիլ ։ Բայց նոյն Հայ մարդն իբրեւ Հայոց ազգայնութեան պատկանող պէտք էլ ունի միանդամայն իր ստացած դիտութեանց և ուսմանց միջոցով այն ազգին, որու պատկանում է ինքը, հին և նոր կեանքի դոյութիւնն ու դբութիւնն պտտել ու ճանաչել, որովհետեւ գեո ինքը համայն մարդկային բնկերականութեան չտատկանուած պատկանում է եզել իր ազգին և իրմէ առաջ էլ իր ազգն ընդհանուր բնկերականութեան ։ Աստի պսօրութայ Հայ մարդն իր իրաւունքը մարդկային բնկերականութեան պատկանելու ստացած է լինում իր ազգէն, որ իրան ծնունդ և զոյութիւն է տուած ։ Արեւմն հապէտք է և պարտական է զխտենալ թէ այդ ազգն ուր էր աշխարհ

*Մայեաղ—Նովա լուս գցած աշխատասիրութենով Գեորգայ Աւսերտեանց։ Եւ. ԻԳ. ԻԳ. ԻԳ. ԳԵ. ԳԵ. ՚ի Մոսկուա, 1852 :

հումն , ի՞նչ էր աղղայ մէջ . իր երկիրը , իր կեանքը , իր կրօնը , իր բարբառը իրան ի՞նչ կերպարանք էին տուած , ի՞նչ գրու թեան մէջն էին պահում և դէպի որ տպագայն առաջնորդում :

Ղորդ է , այսօրուայ Հայ մարդու համար այդ գիտութիւնը ստանալը շատ ծանր ու դժուար գործ է , ճիշտ այն մարդուն է նմանակ որ իր թանկագին ապակեայ անոթը կոտորուկ փշոր փշոր է եղել և նա անդադար աշխատում է այդ կտորուանքներով և փշրանքներով անոթը վերջինել և իր առաջին ձեւին բերել : Բայց պիտի ասեն մեզ թէ միթէ չէ՞նք տեսնում որ թէ և յրուած ենք , որ Հայաստանեայց եկեղեցին կայ ու պիտի մնայ միշտ , Հայաստանն էլ այն տեղ է . մեր զբարաւ լեզուն դրքերում և բարբառներն էլ ժողովրդին բերնում , ասել է որ կոտորւած անոթին մեծ մասերը կան . բայց արի ասե որ հէնց այդ մանր մանր փշրանքները , այդ մեծ մասերն մի ամբողջութիւն մի ձև պիտի տան կոտորւած անոթին . առանց դրանց միշտ ջարդուած և պատոււած պիտի մնայ :

Արդ , պատուական Հայր , ինչպէս Ռուսաստանի Հայք , սրանց առաջինն է վերեն յիշուած վախճանեալ տարնն Գէորգ Ախլէրեան և իրան հետևողներն են այդ մանր մանր փշրանքները հաւաքողներն ամբողջն ձևայնելու համար . նոյնպէս և դուք մեր Յաճկաստանի Հայոց մէջ առաջինն եղաք այդ ձեր դրքուկովն այդ գործին մէջ . նւր էր թէ՛ ինչպէս Ռուսաստանն այնպէս էլ մեր մէջ հետևողներ լին՝ ինչպիսիք ձեռնարկութեանց և վերջն ու վերջ Հայոց ազգն իր անձկացած կեանքի ճիշտ կերպարանքն ճանաչելով իր այսօրուայ կերպարանքն ազգէր համաշխարհային ընկերականութեան մէջ :

Մնամ , Հայր սուրբ պատուական , ձեր օրհնութեան ապով ձեր բարեկամ

Իսապիւղ , 29 նոյեմբեր 1874 :

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԵԳԵԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Գ.

Ամէն ազգային դպրոց իր յայտադրին մէջ չմոռնար յիշելու Քրիստոնէական վարդապետներին, իրօնաբէական և այլն, և եթէ երբեք տեսուչ կամ վարժապետ մը զանց քնէ անդդուածութեամբ կամ դիտմամբ ուսմանց այս կարևոր մասն, անմիջապէս իբրև ամբարիշտ, իբրև անկրօն կ'ամբաստանուի. ուստի կ'փութայ նա՝ եթէ անդդուածութեամբ էր՝ յօժարակամ ուղղել զայն, եթէ յատուկ դիտմամբ էր՝ կիզմաւորութեամբ ծածկել՝ դաշմակցութեան առաջն առնելու համար։ Բայց մեր մէջ ոչ միայն քրիստոնէական ուսումն, այլ ուրիշ շատ ուսումներ յայտադրել և դործադրել տարբեր բաներ են։ Ժողովուրդը շատ անդ բառերով կ'շատանայ և խորը չմտուեր, դործադրութեան պայմանները չհարցըններ։ Բաւական է որ ուսմանց յայտադիրը ճոխ, լեցուն, փայլուն լինի, նոյն ուսմունքն աւանդելու նիւթական և մտաւորական միջոցներն երկրորդական պարագաներ են իր առջև։

Ըստ որում մեր մէջ դրամի կամ դասատուի պակասութենէ՝ քանի մը ուսմանց ուսչութիւնն մի վարժապետի վրայ կ'բեռնաւորենք, շատ անգամ Քրիստոնէականի դասատուութիւնն ալ խեղճ հայագէտին զուրը կ'կոպենք, առանց նկատելու որ մի և նոյն անձը չէ կարող քանի մը սրաշտօն միանգամայն վարել և լաւ վարել։ Եկեղեցականն՝ որ երբեմն դպրոցին դաւթէն անցնելու անգամ կ'ըժկամակէր, և աշխարհականին հետ իրաւասութեան խնդիրներու վրայ չէր դժուար, տեսնելով որ օր ըստ օրէ իր ազդեցութիւնը կ'կորուսէ, ելաւ՝ վերջին տարիներն՝ իր վարդապետական իրաւունքը պահանջել, և առանց իր կարողութիւնն կշռելու, առանց իր վարքն ու բարքը փոխելու, քրիստոնէական վարդապետութեան իբրև ուսուցիչ ներկայանալ։ Բայց կրօնի աշխարհական դասատուն ժողովրդեան առջև անվստահելի ցոյց տալու համար բարութանք մը, զրպարտութիւն մը պէտք էր, և այս բարութանքն, այս զրպարտութիւնը դարբնել զժուարին չէր։ Ձեռն ազգային դպրոցներու մէջ աշխարհականները Քրիստոնէական չեն սորվեցըններ, կամ կրօնադիտութեան անդ՝ նիւթականութիւն, քրիստոնէութենէ անկախ բարոյականութիւն, կամ անաստուածութիւն կ'ուսցընեն, ուստի վար

աւենենք այդ ամբարիշտներն և մենք անոնց տեղը նստինք» : Բայց կրօնականն այսչափ փոփրեւել և զբարատութեան զիմեւս պէտք չունէր, վասն զի աշխարհականն ականոյ առած մէկ բեռն կրօնականին վրայ նետելու պատրաստ էր, մանաւանդ եթէ կրօնականն ինչպէս որ պարտ էր, ձեռնհաս զտնուէր այս պաշտաման : Թերեւ հասարակաց ձայնին և եկեղեցականաց բողոքներուն միտ գնելով էր որ Ազգորնական Արօնական ժողովն անցեալ տարի կրօնագէտ եկեղեցականներ ընտրեց որպէս զի այլ և այլ վարժարանաց մէջ Քրիստոնէական վարդապետութիւն դասեն : Քանի՞ հատ կրօնի ուսուցիչ դասու ինձ անցայտ է թէ և, այսօր ազգային դպրոցները քանի՞ վարդապետ ու քահանայ կը յաճախեն իբրև դասատու չգիտեմ, սակայն քաջ գիտեմ որ այս ուսումն տանդելու համար մեր ձեռքն եղած միջոցներն, մեր հետեւած եղանակը բոլորովին անբաւական են և տկար, այնպէս որ ասոնք չեն պատասխաներ կրօնական դաստիարակութեան նպատակին՝ որ ամէն կրթութեան հիմնական մասը կ'հուշակուի ու կ'քարոզուի իրաւ, բայց բոլորն ալ կրօնական բառադիտութեան վրայ կ'կայանայ, այսինքն չոր ու ցամաք կրօնական բառերու սերտողութեան վրայ, որոնք իբրև մութ ու խորհրդաւոր ձայներ կ'հնչեն աշակերտին ականջին՝ առանց մտքին ու սրտին մէջ բան մը թողլու :

Առ նախակրթարանի համար շինուած կրօնական դասադրերն, օրինակի համար Մանր ուսմանի՞նք* և աչքէ անցուր : Թող վերջի պատմական մասն, որ թէ և փոքր ինչ հասկանալի, դարձեալ խիստ հակիրճ և ցամաք է, ինչ պիտի դանես, թէ ոչ հարց ու պատասխանիլով զրուած եկեղեցւոյ ծանր խորհուրդներ, որ նոյն իսկ աստուածաբանները կ'տաղնապեն, Աստուածութեան անձանց վրայ կտրուկ բացատրութիւններ, որ հասուն մտաց անդամ դող կ'աղբեն, անմահութեան, արքայութեան և դժոխքի վրայ վճիռներ, որ խեղք ու միաք կ'շփոթեն, իւր մտաց ութ, տասն, տասնեւեկ տարեկան տղոց միւսքն՝ որք թէ և կ'սերտեն մեքենայէս, կ'արտաբերեն թուրքալի պէս, ամէն հարցման շինուած պատասխան մ'ունին, որ ռամկին սքանչացում կը պատճառեն, սակայն իրապէս ինչ արդիւնք, ինչօղուտ կ'արտադրեն այն թարմ մատղաշ սրտերու մէջ, ոչ ինչ :

Իմ միտքս այս կամ այն Քրիստոնէականի դասադիրքը դատաքննել

*Մանր ուսմունք Քրիստոնէական հաւատոյ եւ սրբազան պատմութեան Աւետարանի : Տպագր. Տէտէեան :

կամ դատարարաւել չէ, այլ այն եղանակն որով նորոս աշակերտի մը կրօնական տարեբոյ կ'աւանդուին, այսինքն անբանաւոր կամ խորհրդաւոր ձևեր, ամենեւին զուրկ հոգին զարդացնելու պայմաններէ: Երաս-
ւի, դատարարն պարտաւոր չէ գատողբի մը կասելիլ, դատը բաւ առ
բաւ ուսցնել, գատողիքն իր ձեռքը լոկ ուղեցոյց մ'է որով պիտի
առաջնորդուի քրիստոնէական ուսման զանազան մասունքը պարզել,
մեկնել, ընդլայնել և բարոյական հրահանգներ հանել. սակայն ինչ-
չորի մեծ լինի իր հմուտ թիւնն ու ճարտարութիւնն, դարձեալ, քանի
որ կրօնի վարդապետական շրջանին մէջ պիտի գառնայ, առ հարկի սխ-
տի ստիպուի կակաղել, կամ մատղաշ խնցովանութեան անհայելի կէ-
տերու վրայ քող ձգել, փոքր ինչ հետաքրքիր ու յանգուզն աշակերտի
մը պարզմտութեամբ ըրած հարցումներու առջև: Գասաւորին այս վա-
րանումը կամ ծածկապահութիւնն թէ և տարբեր ներդրածութիւն
կրնայ ունենալ տարբեր մարի և կարողութեան տէր աշակերտներու
վրայ, բայց արդիւնքը՝ կրթութեան մասին՝ դրեթէ նոյնն է: Ուշիմա-
շակերտը գեւ դատելու ու խորհելու չսկսած՝ պիտի սխտի կասկածել իր
կրօնագէտ վարժապետին խօսքին վրայ, և իր կասկածներն արտա-
քուստ ճարակի գտնելով՝ քրիստոնէական դասերէն օգուտ մը չպիտի
քաղէ. զանգաղամիտ աշակերտն իր բն. պատգամ պիտի ընդունի լրամ-
դասն և մեքենապէս պիտի կրկնէ՝ առանց անոր ողին և նշանակու-
թիւնն ըմբռնելու. մին կասկածոտ, միւսը կոյր հաւատաւոր, մին
սկէպտիկեան, միւսը մոլեռանգ պիտի գառնայ, և այս հետեւանքն
գասախրատութեան առաջադրած նպատակին բոլորովին հակառակն
է, քանի որ՝ չէ թէ լուռամիտ քրիստոնեայ հայեր, այլ անկրօն կամ
մոլեկրօն հայեր պատրաստած պիտի լինի:

Ուրեմն ինչ ընել պէտք է. միթէ մեր դպրոցներէ վերցնենք քրիս-
տոնէական ուսումն, միթէ միայն լեզու, միայն գլորութիւն, միայն
դիտութիւն, միայն զուտ խմատափրութիւն ուսցնենք, մինչդեռ աղ-
դին մէջ՝ երեւելի և բնախիլ դլութիւններ, կրօնական զղացման թուլու-
թեան, բարոյց աստիանութեան, նիւթափրութեան վերադրելով ժո-
ղովրդեան վատթար վիճակն ու յետադիմութիւնն, կ'նկրախն նոյն
զյայտումը զօրացնելու միջոցներ փնտռել, Հայաստանեայ եկեղեցւոյ
հետեւեղ վարդապետութեանց ուսումը տարածել, աղղին փրկութիւն
նա՝ կրօնադիտութեան մէջ փնտռել: Մտերայ, Փէշաբաճեանի, Շաջ-
եանցի, Մուրադեանցի, Տ. Սարգսեանի պէս մարդիկ՝ ոչ միայն խօս-
քով ու գործով, այլ զանազան պատգրքեր յօրինելով՝ աղղին մանկ-

ուոյն քրիստոնէական ուսումը հիմնովին տալու պէտքը կ'զգացնեն : Մինչ անոք արդէն Գրիգորիոս Գրիգորիանոս զգացնեն իր միտքը՝ այս Գրիգորիանոս և Պարտիկոս Բաղդադէն, այն իր Հասարակաց Եկեղեցւոյ Պատմութեամբը, միւսն իր Գննական Արժեքներ Գրքովը բարեպաշտութեան, աստուածաբանութեան, առաքինութեան դանձեր կ'ըսեն ազգին : Աստի երբ այսպիսի մեծ հոգիներ կրօնադատութեան վրայ կ'հիմնեն ոչ միայն ազգին երկրային զարգացման յոյսն այլև երկնային ժառանգութիւնն՝ մեզի ինչ կ'մնայ ընել բայց միայն զլուս ծնել և անոնց պատգամներն ընդունիլ :

Եւ ես կ'ընդունիմ այս պատգամները, այլ ընտրողութեամբ : Արդէն ըսի որ բարոյական դատարարութիւնն մարմնաւոր և մտաւոր կրթութեան խաբիսը պարտի լինիլ . բայց երբ այս բարոյական դատարարականութիւնն պարզապէս բառական, անուանական կրօնադատութիւն մը կ'զառնայ աղոյ նկատմամբ, այն ատեն միտքս կ'ըմբոսանա աշխարհիս ամէն կրօնադէսներու վճիռներուն դէմ, և կ'ըսեմ որ, եթէ առանց հասկնալու հասարակաց մաս մ'է չափահաս քրիստոնէի համար, առանց հասկնալու աղոյ հատան ըսելն ալ՝ կրթութեան և ճշմարտաբանութեան դէմ ո՞՞ր մ'է դատարարակաց կողմէ : Այն օրն որ աշակերտը կ'յորդորուի հաւատաւ առանց իմանալու, այն օրն որ պատանին կ'հատայ առանց համոզուելու, այն օրն իր ապագան կ'ինքէ, ուրիշին աչօք տեսնելու, ուրիշին մտօք դատելու, ուրիշին հեղինակութեան և կամայ համամատ շարժելու դատապարտեալ ստրուկ մը, մարդկան, կարծեաց և պարագայից խաղալիի մը կ'դառնայ : Լաւ ես ռանիմ մանուկը բնական լուսին թողուլ, քան թէ այնպիսի մթնոլորտի մէջ կրթել, նր կրթութեան առաջին սայմանն իմացական կարողութիւնը ճնշել, բթալընել է :

Արեմ, կ'կրկնեմ, ինչ ընել պէտք է . ինչ որ բնութիւնը մեզի կը ցույցնէ : Եթէ ստոյգ է որ վայրենութեան բնիկն իսկ կրօնական զգացման ընդունակ է, եթէ ստոյգ է որ կրօնը մարդուս բնածին մէկ զգացում մ'է, տենչ մ'է որով զերպոյցն Եին հետ կ'կապուի, բնաւ վախճալու տեղի չկայ որ մեր մանկային անկրօն մնայ, այն ընկերական շրջանին մէջ ուր հայրն ու մայրը կ'դառնան, ուր կրօնական զգացումն աւելի աղնիւ ու ընտիր կերպարան մ'առած է, զարգացած է : Այս զարգացումն արտաքին ձևերու, արարողութիւններու, նոյնիական և դասական դիտելեաց վրայ չկայանար, իր ալբիւրը սիրան է, հետեւապէս ամէն բանէ առաջ տղուն այս ընդարդոյ հանգամանքը, սրտի

կրօնն մշակելը պիտի լինի ծնողաց հողը, որու տջակից պիտի գտնուի ՚ի հաքիէ և դաստիարակն, այնպիսի գիւրին միջոցներով զոր իրենց կ'ընծայեն նոյն իսկ առանին և մանկային կեանքը . . . : Այնպէս որ աշակերտը՝ դեռ կրօն ու կրօնի վերաբերող անմարսելի բառեր չսորսված զղայ թէ ի՞նչ է անոր բնութիւնն և ի՞նչ մեր վրայ դրած պարտաւորութիւնները : Ասոր համար բաւական է զղացընել անոր բարոյականի սկզբունքն, արթնցընել անոր խիղճը, բարոյն և չարին զանազանութիւնը բացատրել պարզ օրինակներով, և հետզհետէ՝ քանի որ մեծնայ, առաջնորդել զանի գէւ ՚ի սիրոյ և ճշմարտութեան աղբիւրը, առ Աստուած : Թաղ այնուհետեւ կարգաւ և այն գիրքերն որ քրիստոնէական ուսման և մանաւանդ Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան կ'վերաբերին, և հաւասար եղիւր որ անոնց արժէքն կշռելու համար բաւական սկզբունք և դատողութիւն ունենալով՝ դասատուն մեկնութեանց շատ չպիտի կարօտի . . . :



ՊԻՐՄԱՆԻ ՀԱՅՐ

Յարգոյ պարոն Մինաս Գրի. տէր խաչատրեան 'տորջու զայեցի' անցեալ ամսոյ Յիւն առաւօտուն Աղէքսանդրիոյ ճանապարհաւ Պիրմանստանէն (Հնդկաստան) հասաւ ՚ի քաղաքս, և երեկոյին մեկնեցաւ ՚ի Ա. Պօլիս երթալու. ուսկից ՚ի սուրբ Էջմիածին պիտի երթայ մասնաւոր պաշտօնիւ միով ՚ի տեսութիւն ամենայն Հայոց Ս. Աթոռիկոսին :

Յիշեալ պարոն Մինաս՝ որ Պիրմանի Թագաւորին անձնական ծառայութեանը մէջ կը գտնուի պատուաւոր պաշտօնիւ մը, պատմեաց մեղթէ՝ 'Նորին Աւհափառութիւնն լի է մարդասիրական առատադուր զգացմամբ վասն փոքրածիւ Հայ բնակչաց Պիրմանստանի, և Մանթլէ թաղաւորանիստ մայրաքաղաքին Հայոց եկեղեցւոյն շինութեանն զբամական օգնութիւն մատուցանելէ ետեւ, նոյն եկեղեցւոյն քահանային ևս ամսական թոշակ որոշեր է :

Պիրմանի օգոստոսիաւ Թագաւորին՝ իւր տէրութեան մէջ բնակող Հայոց վերայ ունեցած վեհանձնական այս բարձր խնամատարութիւնն՝ խորին երախտադիտութեան պարտք կը դնէ իչ միայն նոյն երկրին մեր

տակաւաթիւ աղղայնոց վերայ, այլ ընդհանուր Հայոց աղղին վերայ՝ որ Նորին առատազուծ Վեհափառութեան բարօրութեանն և երկար կենաց համար աղօթող է առ ստեղծիչ Տէրն համայնից ։

Այս աւթը արժան կը համարիմք ծանուցանել մեր ընթերցողաց թէ Պիրմանստան՝ Անդրդանդէսեան Հնդկաստանի միահեծան տէրութիւն մի է . որոյ բնակչաց թիւն՝ որք կուսպաշտ են, ութ միլիոն հոգիի կը հասնի ։ Հարկ եղած ժամանակը՝ այս տէրութիւնն կրնայ 60,000 զօրք հանել ՚ի սրաշապանութիւն իւր երկրին, որ յոյժ արդաւ սաւոր է, և կլիման սաստիկ տաք ։ Ռանկուն ծովեզերեայ քաղաքն՝ ռակից ՚ի Մանթլէ՝ այսինքն ՚ի թաղաւորանիստ քաղաքն կ'երթուի, յոյժ վաճառաշահ և բանուկ նաւահանդիստ մի է ։

(Արշալոյս Աբարաւեան)



ՍՌՈՒՄՆԱԿԱՆ ՏԻՐՈՒՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴՈՒՍՏՐ ՄԵԾԱՀՈՒՔ ԴՐՈՒՄԻ ԷՔԷՆՏԻՒ ԱՊՐՕԵԱՆԻ

Ո՛հ, Տիրուհի, սիրուն կուսան, վերալսման առ ՚ի մէնջ,
Է՛ր քո այդ հեպ յաստղականուս, դու ամմահից սիրատենչ .
Սրկնապարիկ հոգւոյդ ընդ թիւս եւ ընդ վերելոյ արփենի,
Տե՛ս, զի՛նչ յերկրի թողուս լըքես ՚ի սիրտ ՚ի տուն հայրենի ։

Ձհայր քոյին անժառանգորդ, զսիրելիսդ կամոզին,
Պսակս եւ յոյս, փառս եւ ժպիտ, եւ յիշատակ սիրային .
Ա՛հ, յիշատակ քո, Տիրուհի, ամմահ ՚ի մեր կայ սրտի,
Թուիմք լսել զծայն աղանույդ՝ որ ՚ի յերկնից մեզ խօսի ։

«Տի՛, մահացուքդ, զօրիորդիս երգէք զգեղ վաղանցիկ,
Տի՛ ըզընծորհս մարմնոյ ունայն, մի՛ զիմ հասակ ըզծաղիկ ։
Սին են քարոզքդ, ոչինչ ՚ի շահ մարդկան սեռի բովանդակ,
Այլ ըզհոգոյ երկնապարգեւ երգեցէք շնորհս՝ յօրինակ ։

Պեղածիծաղ զարուն կենաց ժպիտ՝ ՚ի դէմս մընայր ինձ,
Աարծր իմաստից, ուսմանց, լեզուաց զիս պճնեցին, զա՛րդ անքիծ ։
Շոսկի վրձին բզախեզերս պարուրէի վայելուչ,
Էրտան իմ մարմնիս յանոյշ հաշնակ երգ յօրինէր սրտառուչ ։

Միակ եւ **եթէ** սփոփանք առաքինոյ հօր վեհի,
Ում 'ի նուէր յեղի 'ի Հայ զիմ վէպ ընտիր **Լէօնի**.*
Այլ չեւ տեսեալ զիմքս երկոց եւ ոչ կենացս ըզպսակ,
Էջ լուսափայլ հրեշտակն առ իս', բանբեր վճռոյն երկնառաք:

Ասէ. **Մայր** քո եւ երեքին եղբարքդ մ'նան քեզ յերկինս,
Մոռա' ըզտուն քո հայրենի, ե'կ վերճեմել դու ընդ իս.
Արի' երթամք, զի ցանկացաւ **Արքայն** երկնից գեղոյ քոյ,
Փոխան փշեայ աստ պսակի, թագ ընկալցիս անդ լուսոյ:

Մի' դու, հայր'իմ, մի', աղաչեմ, մի' լար հրաժեշտ զիմ անդարձ,
Մայր եւ եղբարք իմ հիւսեցին ինձ սուրբ պսակ հարսանեաց.
Ես 'ի խրախճանս հրճուիմ պարեմ 'ի դաբիրայս **Պղեմայ**,
Երկնաալայիկ աչօք հոգւոյդ եւ դու ընդ իս, հայր, ցնծա':

Իսկ դու, Հանի իմ սիրելի, մի' զիս եղբար բընալին,
Տուր փարաւազս սրտի հօր իմ եւ սիրելեաց կաթողին.
Լուսանըկար կենդանագիր վարդ այտերոյս լուսաթոյր,
Եւ գործք մատանցս կացցեն առ ձեզ միշտ յիշատակր սիրաբոյր:

Ի խանձարուրս առ որբանաւ աչք իմ տեսին նախ զքեզ,
Ազնուագարդ Մանեա տիկին, ըզքէն շընորհ ունիմ ես.
Որ մայրազուծ 'ի քո բազուկս զիս զգուեցեր, եւ արդ լասդ,
Այլ աղաչեմ, սրբեա' զարտօսք, ես ոչ մեռայ, այլ կեամ աստ:»

Ռհ. ինձ զժբաղղ վարժապետիս քո զո՞ր արդեօք սփոխանս
Տացես աստէն, ո'վ **Տիրուհի**, հրեշտակատի'սդ 'ի կուսանս,
Հիացեալ եմ ընդ քո վսեմ ոգի եւ սիրտ լուսազարդ,
Յերկնից էիր թէ 'ի յերկրէ, եւ հիւրացա'ր առ մեզ մարդ:

Եւրոպ անգամ սրանչացաւ ընդ Հայունիդ քաջուշիմ,
Մինչ ընդ յարկան երիցս զքեզ հիւրընկալէր մտերիմ.
Ի քում անձին նա հիանայր ընդ Հայաստան կանանի,
Եւ մատնանիշ՝ ասէր. **Քանի՞** վեհ է Հայ սեռ գեղանի:

Այդքան շնորհաց քոց երկնածիր Հոմերք մ'նային քեզ քարոզ,
Ասա՞ղ վշտիս, զայս առ շիրմադ կախեմ արդ սեաւ կընդնող.
Հե՛ղ 'ի բարձանց, հրեշտակդ անմահ, գերմարդկային զօրութիւն
Ի սիրտ հօր քո, եւ լռեսցուք՝ այլ մի' լիցուք մեր նկուն:

Ի Զմիռնիա, Յ զեկտեմբեր 1874:

Ա. Ս. Յ. Պ.

*Վէպ ընտիր Գաղղխաւան, զոր փոխեաց 'ի Հայ 'ի նուէր հօր իւր սիրելւոյց:

ԽՆԱԾԱԽՅՈՒՄՆԵՐԶԱՅ ՆԻ ԱՆՆԱ.

. . . Խմբագիր ,

Ինչպէս որ Սէնի նոյեմբեր ամսադրոյն մէջ կարգացած էք , Ղարապաղցի Մեծ . Ռ . Գ . Բարխուդարեանց՝ իր յօրինած Խաչատրի Մերլաւ Անուանումը ազգային պատմական վէսրը հրատարակելու գիտաւորութիւն ունենալով՝ ՚ի մասնաւորի Կ . Պօլիս և Զմիւռնիա ստորագրութիւն մը բանալու կ'առաջարկէ՝ տպագրութեան ծախսը մատակարարելու համար :

Արդ՝ քաղաքիս մէջ բաժանորդագրութեան դորձակալ յատուկ նամակաւ սահմանուած լինելով՝ արժան գտաւցի սոյն յայտագրութեամբ հրա իրել ամէն բանասէր և ընթերցասէր ազգայինս որ բարեհաճին բաժանորդ գրուիլ այսպիսի օգտակար գործի մը հրատարակութիւնն ՚ի դլուխ հանելու աջակցելով :

Բաժանորդաւինն է իւրաքանչիւր օրինակի համար 3 հինգնոց : Ստորագրութեան տեղերն են Ազգային առաջնորդարանն ու ընթերցատունը , ուր յատուկ տետրակներ բացուած են բաժանորդները նշանակելու , որոց անուանքն Սէն ամսադրոյն մէջ ժամանակին պիտի հրատարակուին :

Քաջադոյս եմ որ այս իմ հրտէքս լսելի լինելով՝ ամէն ուսումնասէր աղջային յօժարակամ պիտի փութայ բաժանորդ գրուիլ , վէպին հրատարակութենէ ետք իր դրուած բաժիններուն չափով օրինակներ ստանալու պայմանաւ :

23 դեկտ. 1874

Զմիւռնիա :

Մնամ աղօթարար Ազգիս

ՊԵՏՐՈՍ Ծ . Վ . ՆԵՐՍԷԱՐԵԱՆ

ԱՅՑ ԸՆԹԵՐՅԱՑՈՒՆ

Քանի մը տարիէ 'ի վեր՝ քաղաքիս Հայ Ընթերցատան Տնօրէն խորհուրդը՝ ամէն դժուարութեանց յաղթելով՝ իր տոանձնած պաշտօնն վեժ հոգատարութեամբ կատարելէն ետեւ՝ կ'յաւի, կ'վճատի այսօր բաժանորդաց անտարբերութեան առջեւ, և իրաւունք ունի : Ճշմարիտն՝ ամօթ է իզմիլցւոյ որ Ընթերցատուն մը պահելու չափ փափաք ու եռանդ չեն ցուցներ, մինչդեռ ուրիշ հասարակութիւններ իրենց թանկարանները կ'ճոխացնեն, և 'ի մասնաւորի յոյնք՝ մեզէ օրինակ առնելով՝ ոչ միայն մէկ այլ քանի մ'ընթերցատուններ հետզհետէ հաստատելին և զարգացողին : Տնօրէն խորհուրդն Ընթերցատան այս տխուր վիճակին դարման մը բերելու գովելի արիւթեամբ և միանդամայն իր երկամեայ համարատուութիւնն ընելու մտօք՝ քանկաց Ընթերցատան անդամներն (որոց մեծ մասն անուանական են) 'ի ժողով կը հրաւիրէ, ընդունայն : Բայց վերջին հրաւէր մ'ուղղելով կ'յաջողէ տասնի չափ հիմնարկութեան յառաջագիմութեանը նախանձախնդիր ու ջուլմասէր ազգայիններ դումարել, նիստ կազմէնէրկայ ամսոյս 29ին, և անոր վիճակը յանդիման ածել : Ներկայ անդամք՝ բաւական խորհեհեղէն ետեւ՝ կ'որոշեն,

ա) Ընթերցատան նիւթական վիճակն ապահովել և անոր կանոնադիրը վերաքննութեան ենթարկել ընդհանուր ժողովով : Բ) Ընդհ. ժողով կազմելու համար գոնէ քառասուն բաժանորդ անդամ դնել : Գ) Առ ժամանակեայ մասնաժողով մը կազմել որ պաշտօն ունենայ ստորագրութիւն բանալ և յատկապէս ազգայնոց դիմել գրամհատարքելու համար, այնպէս որ երբ ստորագրող անդամնց թիւը քառասունի ելէ՝ ընդհ. ժողովը դումարուի : Դ) Նախապէս որոշուած բաժանորդագիրը կամաւոր տուրքի վերածել, այնպէս որ ամէն ազգային՝ ըստ կարողութեան և առատաձեռնութեան՝ դումար մը ստորագրէ :

Այս որոշումներն՝ որոշին դիւրութիւն և յաջողութիւն տալու մտօք եղած լինելով՝ քաջայայտ ենք որ ուսումնասիրութեան փորքի կայծ մը անդամ իր սրտին մէջ տածող հայը պիտի չմերժէ Ընթերցատան մասնաժողովին հրաւէրն, և յօժարակամ պիտի փութայ մասնակցիլ դրամապէս, վստահ լինելով որ ստորագրելիք դումարն Ընթերցատունն, այս է կըթութեան տուն մը, ազգային պատուոյն հետ պիտի վերաջանայն :

ԳԱՆԱԲԱԿԱՆ

ՖԻՆԱՆՍԱՆ զերազանցապէս կուտակցու թեանց աշխարհ մ'է, հետեապէս շարժման. բայց շարժում մ'որու նպատակը դրեթէ անյայտ ու մութ կ'երեւի: Բնական օրէնք մ'է որ զիրար հաւասարապէս վաշող զօրութիւններ կ'էզդքանան: Ֆրանսա ասոնց մէջ ոչ առաջ և ոչ ետեւ քայլ մը կ'առնու իր սահմանադրական կազմակերպութեան մասին, և անտարակոյս քիչ-քիչ անոնց մը կ'ստատէ որ կամ միապետութեան գուրը գլորի, կամ մնայուն հասարակապետութեան հասնի, քանի որ իր պատմութեան արամբարանութիւնն ու իր վեբջին աղէտից յիշատակը բնաւ չեն ներգործեր իր վրայ: Իր ազգային ժողովն եթէ ոչ իր կարծեաց հաւատարիմ հայելին, գէթ անոր զոյտութիւնն իր անխորհուրդ և յեղեղող ընթացից արդիւնքն է: Երեսփոխանութիւն մը որ կ'ապրէ երկրին շահաց հակառակ և բացարեւուն դաւեր գործելով հանգերձ, ընտրողներուն ապիկարութիւնը կ'յայտնէ, և բազմազլուխ ինքնակալութիւն մ'է նոյն երկրին արժանի: Մինչդեռ բոլոր Ֆրանսայի հասարակութեաց 428,000 քաղաքապետական անդամաց ընտրու թեան առթիւ արմատական տարրը կ'յաղթանակէ, ազգային ժողովոյ այլ և այլ յետագիւնական մասունք կ'խլւաին որ Ֆրանսայի թաղա որ մը կամ կայսր մը տան: Իրաց այս այլանդակ ընթացքին մէջ կարելի չէ յուսալ որ Ֆրանսա հաստատուն կառավարութեան մ'երես տեսնէ: Ինչպէս լաւ կ'ըսէ զաղղիական թերթ մը. — Ֆրանսայի լուրերն իրաց և զաղափարաց նոյն շրջանին մէջ կ'դառնան. կուտակցութիւններն անգոր են բան մը կազմաւորել, և անկարելի է ներկայ վիճակը պահել: — Նախագահն՝ ժողովին բացման առթիւ՝ Սիսէյ՝ պատերազմի պաշտօնէն ընդմիջելու իր պատգամագիրն արձակեց: Այս պատգամը մեծ տպաւորութիւն չորս: Մտք-Մահան հաշտարար ոճ մը զ'գործածէ, չպահանջեր որ ժողովն անպատճառ սահմանադրական օրինաց հաստատութեան զբաղի, այլ միայն կ'առաջարկէ, և եթէ մերժեն՝ փոյթը չէ, վրան գի զէնքով պիտի պաշտպանէ իր դիրքը. իշխանութեան գլուխը պիտի կենայ եօթ տարի. *J'y suis, j'y reste*, կ'ըսէ նա Նափոլէօնեան մեծարարութեամբ: Բայց Շանսօրի կոմսն իր կուտակեց աշակողմնաց կ'էրէ գործեալ որ բնաւ իրենց սկզբունքէն չչեղին և միշտ Պուրպուրի գալստեան նպատաւոր միջոցներն ի գործ դնեն: Այս միջոցներէն մին պիտի լինի անշուշտ անդրաբնական կողմը զօրացնել նոր անօրէնութեամբ մը: Մինչ քարդ պետութեան յատուկ արտօնութիւնն

էր համալսարանական աստիճաններ հետո՛րհէլ . ծրագիր մը կ'ներկայա-
նայ ժողովին այս արտօնութիւնն մտնուոր համալսարաններու ալ տա-
լու : Հողով մարմնով կ'պաշտպանեն այս ծրագիրն կղերականք , որ ի-
րենց կատարեալ կազմակերպութեամբ և անբաւ հարստութեամբ պիտի
կարող լինին իսկոյն համալսարաններ հիմնելու , միւսգեւ աղատական
երեսփոխանք կ'հակառակին , վասն զի այս անօրէնութեամբ յաջորդ
սերունդը Վատիկանու սերտ և հաւատարիմ արքանականները պիտի
դառնան , և երկիրն նորանոր խռովութեանց պիտի ենթարկեն : Պ.
Բրէտանսէ , նշանաւոր բողոքական քարոզիչն , ծրագիր մը ներկայացը-
նելով՝ պաշտամանց ողատութիւն կ'ինչդրէ ապա Ֆրանսայի մէջ : Պե-
տութիւնն այժմ միայն կաթոլիկները , հրէաները և բողոքականները կը
ճանաչէ , միւս բոլոր աղանդները հալածանաց ենթակայ կ'լինին երբ
իրենց պաշտամունքը կատարելու համար դումարելին : Այս հիմնա-
գիրն կղերին զայրոյթը կ'զրկուէ , թէ և յուսալի է որ ընդունուի :
ԳԵՐՄԱՆԻԱ՝ որ զայնթափութենէ կ'խորշի՝ դիւանադէսներու և
լրագիրներու բաւական զայնթափութեան և բամբասանաց նիւթ տուաւ
Արնիմ կոմսին դատաստանաւ : Արնիմ՝ որ միշտ Պիտմարզի հետ կ'լի-
շուէր ատեն մը՝ միջազգային դործառնութեանց մասին , Արնիմ՝ որ
մեծ դիւանապետին անբաժանելի աջակիցն էր և խորհրդակիցը , հինգ
վեց ամսէ՝ ի վեր՝ թերեւ իր զլխաւորին հետ չափուելու և իր գիւա-
նադիպական թաղուն հանձարն աշխարհի ցոյց տալու մտօք՝ իր զլխա-
ւորին դէմ ակոյցեան և ըմբոստ կանգնելով՝ գերմանական ծանրու-
թեան և խոհակնութեան ներհակ տեսարանի մ'առնի իր ցաւ : Այժմ
Պիտմարզ և Արնիմ ոսոխներ են : Ի սկզբան ամէն ոք Պիտմարզ իշխա-
նին խտուրթիւնը կ'դատապարտէ և անոր զաղտնի փառասիրական
նստատակ մը կ'ընծայէ . Արնիմ զո՛հ մ'է երկաթ Ժաբրուան ճանկին ներ-
քե , Այստեղ հետ դաղտնի կ'բանակցի , ըսին , և պիտի յաղթանակէ :
Բայց վերջէն յայտնի եղաւ որ Պիտմարզ Այստեղ հրամանին համեմատ
կ'զործէր , այնպէս որ երբ Բարիզի գերմանական դիւանատունէն
պաշտօնական խել մը դրութեանց աներեւոյթ լինելն և մէկ մասն Արնի-
մի քով գտնուիին ու ետ տալու մարտիլը կ'հաղորդուի Այստեղ , Այստ-
րը հրաման կ'ընէ՝ օրինաց պահանջածը կատարել : Արնիմ այն պաշտօ-
նական դրութիւններն՝ որ պապական աթոռին և Պ. Թիէրիի հետ ունե-
ցած խօսակցութեարց կ'պատկանին՝ ետ կ'դարձրնէ . մաս մ'որ Ֆրան-
սայի քանի մը բարձր անձներու հետ ունեցած բանակցութեանց կ'վե-
րաբերի , իր քովը կ'պահէ՝ իբրեւ անձնական սեպհականութիւն , և
ուրիշ շատ մը դրութեանց կորստեան վրայ կատարեալ անդիտութիւն
կ'յայտնէ : Դատաստանին ժամանակ կարդացուած բնագիրներէ և օրի-
նակներէ կ'երեւի թէ՛ Պիտմարզ իշխանն՝ միապետասէր Արնիմ իշխանին
կարծեաց հակառակ՝ Ֆրանսայի մէջ միապետութեան հաստատութիւնն
Գերմանիոյ շահուց մտանդաւոր դռնելով՝ կ'կշտամբէ վկումն որ այն

տէրութեան ներքին դործոց կ'միջամտէ , արքայական ձկտումները կ'քաջալերէ . կ'ըսէ թէ հանրապետական Գրանտա մը Եւրոպայի մէջ անօգնական և անզաշխակից կ'մնայ , ուստի և պատերազմի անարամագիր , և Գերմանիոյ խաղաղութիւնն անվրդով , թէ Գրանտայի Հասարակութիւնը դերմանացի արմատականներն սթափեց , որ չափաւոր ազատական դարձան , և աղատականներն ալ պահպանողական , և այլն : Այս յայտնութիւններն այլոց մէջ այս ևս կ'յայտնեն որ Պիսմարկ իշխանն աւելի բարձրէն կ'նկատէ եւրոպական քաղաքականութիւնն ու դերմանական միացեալ շահուց աւելի ջերմ պաշտպան է քան թէ Աքնիմ՝ որ իր տոհմական յարաբերութեանց համար չկրեց այն պատիժն զոր սնշուք բնատնիքէ ուրիշ մը թերեւ կրէր նոյն պարագայից մէջ : Հետեւապէս եւամենայ բանտարկութեան կ'գատապարտուի և այս պատիժն ալ կ'ոմսին հիւանդութեան պատճառաւ պիտի թեթեւայ : Բայց ուրիշ կարեւորագոյն ինդիւիւսեր կ'յուզուին ալլային ժողովին ձողը : Պիսմարկ իշխանն խիստ դիւրապրդիւ է Ալսաս-Լորէնի մասին : Պիսմարկ իշխան մը տեղի կ'ունենայ այս գաւառին պուտժէին և արոց վրայ : Ալսաս-Լորէնի երեսփոխանը գաւառական ժողով կ'պահանջեն , պնդելով որ սոյն ժողովին կ'վերաբերի միայն պուտժէ շինել իր ներքին ծախուց համար , և թէ նոր դպրոցներու պէտք չունին քանի որ հինները կան : Պիսմարկ իշխանը կ'փրփրի , գեւ ժողովուրդը խակ կ'գտնէ սցգպիսի ժողովն մը համար , հին դպրոցներն տխմար կղերի մը ներքեւ կ'գտնէ , և կ'պնդէ որ տէրութիւնն նոր լուսամբ , այսինքն քերձանապէալ սերունդի մը պէտք ունի , և թէ Ալսասի երեսփոխանը նուաճեալ ժողովուրդներն Բարիզի կամ Հռոմի հպատակ ընելու համար կայսերական բարոյնդը նստած չեն , այլ սոյն կայսերութեան հանրական շահերը պաշտպանելու : Ահաւասիկ կտրուկ քաղաքականութիւն մ'որ բուռն ոյժ կ'հնոյն : Բրուսիոյ պանքան կայսերական դարձնելու օրէնքն՝ դաշնակցական (federal) խորհրդին մէջ՝ իբրեւ սկզբունք ընդունուելով՝ դերմանական մանր մունր պետութեանց պանքաներն պիտի վերանան : Այսպէս քաղաքական , մաքսային , օրէնսդրական միութիւնն ապահովելու ջանալէն ետեւ՝ Գերմանիա՝ եթէ ներքին է բսե՛լ՝ դրամական միութիւն ալ ձեռք ձգելու կ'աշխատի , որպէս զի առուտուրի և ճարտարութեան դործողութիւններն աւելի օրինաւոր ընթացք մը ստանան : Բայց՝ ինչպէս նիւթական նշխարէս երկաթէն բաներն ալ կտրող է Գերմանիա ՚ի մի ձուլել . կրօնական խնդիրն է և պիտի մնայ աղքատ մէջ անլուծանելի խնդիր մը , և Գերմանիա այս պայքարը իր շարունակէ առանց յաղթութեան յուսոյ : Անդրաւելանականը զօրութեան առջեւ պահ մը կ'ծուի , կ'մարի հրալեռի պէս , և երբ ասոր երկրեայ կրակը շատնայ՝ մուխ և լավա կ'թափէ , Ռափայաքներ , Գուլմաններ կ'ծայթքէ քաղաքական իշխանութեանց և օրինաց դէմ : Հիմա՛ կ'ըսուի թէ՛ Պիսմարկ իշխանն կ'ջանայ համոզել տալ Պապն

կաթոլիկ կրօնաւորներ պաշտօնի չտաճմանաժ անոնց ցուցակը կա-
ռավարութեան ներկայացուի և անոր քննչին ներքեւ գրուի : ԱՌՍՏ-
ԲԻԱ դեռ ևս բոլորովին ազատ չէ կղերին ազդեցութենէ, որ կը
նկրտի կրթութեան վրայ հաստատուած օրէնքը դժեւ և ըստ հին
արտօնութեան դաւանելու մէջ դպրոցները վարել : Կառավարութեան
անհոգ և թույլ ընթացքին դէմ եղած բողոքներն ազգային ժողովը
շարժելով՝ կրթութեան խնդրոյն մէջ կառավարութեան հսկողութեան
վերաբերող օրէնքը վերաքննութեան ալիտի առնուի, որպէս զի նոր օ-
րինաց զործադրութիւնն ու կղերին լուծը թօթափելու միջոցներն ա-
պահովուին : Մինչդեռ ՍՊԱՆՈՅ կառավարութիւնն և ի մասնաւոր
րի Սէրանօ Գարչօսեանց դէմ քայլելու կ'պատրաստուէր, որոնք իրենց
կորուսած գիրքն ու իրօնի մօտ իրենց առջի տեղը բռնելու կ'ջանա-
լին, մինչդեռ Տօն-Ալֆօնսի կուսակիցներու դէմ խտրուի կ'վարուէր և
քանի մը զօրապետներ կ'աքսորէր, մինչդեռ 200 հազար զօրքով Սէ-
րանօ կ'յուսար ապստամբութիւնը զսպել և հասարակապետական դրու-
թիւնը զօրացնել, և ահա յանկարծ քանի մը տարուան ճգնուիք, ա-
րինահեղութիւնք և աւերմունք ապարդիւն կ'մնան, թագապետի Իզա-
պէլ թագուհւոյն որդին՝ Տօն Ալֆօնսի թագաւոր հրատարակուելովը :
Սպանիա՝ հասարակապետական դրութեան անպատրաստ, և ապստամ-
բութեան բրած քայլերէն ահաբեկ՝ անուղղակի կերպով Գրանքօ -
Գերմանական պատերազմին զրդիւ տալէն ետեւ՝ կաթոլիկ կղերի մը
մեքենայութեանց ներքեւ տառապաղ ազգի մը ախտը մէկ օրինակը կ'ըն-
ծայէ : Սպանիա՝ աշխարհագրապէս թիւ և Եւրոպայի մէջ՝ բարոյապէս
ասիական աշխարհ մը կ'սեպուի, ուր բռնութիւնն ու անիշխանութիւնն
շրջանաւոր հիւանդութիւններ դարձած են : Սակայն ԻՏԱԼԻԱ ան-
ցեալէն դաս և օգուտ քաղել կ'սորվի : Եթէ ի սկզբան խտրու վա-
րուեցաւ այն հանրավարականաց դէմ որոյ պարտաւոր է իր միու-
թիւնն, եթէ Նափօլէոնի ներգործութենէ և փոքր ինչ բռնի երախ-
տադիտութեան զգացումէ ստիպեալ՝ Հռոմ նուաճելու ու շաղաւ, կա-
ռավարութիւնն այժմ հասարակապետականաց հետ հաշտ կ'երևի, և
Վարիսպալտի ծառայութիւնները ճանչելու կ'սկսի : Այս երևելի յե-
ղափոխականն՝ որ մերժեց ազգային ժողովին կապած թոշակն՝ երեսփո-
խան կ'ընտրուի, այլ Գրանայի միապետական գասէն կ'ըստարտուի իբ-
րեւ դասալիք : Այն որ իր սուրն մի միայն ազատութեան յաղթանակին
նուիրած է միշտ, Պուրպաքիի պարտութեան իբրեւ պատճառ կ'բանբա-
սուի : Հալածանք, զրպարտութիւն և անիշխանութիւն եղած է միշտ
մեծ մարդկան բաժինը : . . .

ԱՄՈՒՐԻԻ ՄԸ ԵՐԱԶՆԵՐԸ

«Բայց Իտալիա շատ հեռու է, Պօղ. երբեք Խնրիքան չպիտի կարենամ տեսնել. նա երբեք աստ չպիտի դայ : Ո՛հ, ո՛հ, Տէվօնը յիշէ : Այնպէս կ'ըզամ որ Գարօլին այժմ իմ քոյրս է. նոյն զլայլումը չունիմ հռոմայեցի աղջկան համար, և չեմ ուզեր որ այնպէս զգամ : Պիտի ըսես թերեւս որ այս կարծիքս ծանր է, և կ'վախնամ որ ասոր համար զիս պիտի պարստուես, բայց ձեռքս չէ, ստիպուեցայ յայտնապէս խօսելու : Քեզ շատ սիրելուս, Պօղ, չեմ ուզեր ծածկել միտքս :

* * * «Ամէն ինչ լմնացաւ : Պօղ, ճշմարիտը շատ յուսահատական է վիճակս. «Ոսկի բաժակը կոտրեցաւ : — Իմ խեղճ հայրս իր վերջին բնակարանը գնաց : Այս բանին կ'սպասէի. բայց ի՞նչպէս կարելի է սպասել այն ահաբեկի եկաւորին — Մահուան : Հայրս այնչափ տկարացաւ վերջին ատեններս, որ հազիւ նարող էր խօսիլ. ժամերով կը նստէր իր աթոռին վրայ, կրակին նայելով կամ պատուհանէն դուրս նայելով : Նա հազիւ կարող էր գիտել զիս երբ իր բարձր փոխելու կ'գայի, կամ իր գլխուն համար կ'կակուղցնէի : Բայց մեռնելէն առաջ շատ քաջ կ'ձանչէր զիս : «Զապէլ, ըսաւ նա, դու բարի աղջիկ մ'ես. Աստուած քեզ պիտի վարձատրէ» : Եւ նա այնպէս դորովաղին համբուրեց զիս, և իմ վրաս այնպէս անձկանալով նայեցաւ, որ պահ մը մտածեցի որ թերեւս վերստին կենդանանար : Երկունն խնդրեց որ իր մէկ շատ սիրուն գիրքը բերեմ : «Հայր իմ» ըսի անոր «դու չես կարող կարդալ, գրեթէ մութ է» :

«Ո՛հ, կարող եմ, ըսաւ նա. Զապէլ, հիմակ կարող եմ կարդալ» : Եւ գիրքը բերի. ձեռքս ընդ երկար բռնեց. ապա գիրքը բացաւ — մահուան վրայ դրուած էր :

«Կանթեղ մը բերի, վասն զի զիտէի որ առանց կանթեղի պիտի չլրնար կարդալ :

«Սիրելի Զապէլ, ըսաւ նա, կանթեղն աւելի մօտ դիր» բայց նոյն պահուն իսկ կանթեղն իրեն մօտ էր :

«Քիչ մ'աւելի մօտ բեր, Զապէլ» կրկնեց նա, և իր ձայնը շատ տխար էր, և ձեռքս ուժգին բռնեց :

«Աւելի մօտ, Զապէլ. — աւելի մօտ :

«Հարկ չկար աւելի մօտեցնելու, վասն զի խեղճ հայրս մեռած էր : Ո՛հ, Պօղ, Պօղ, գլխիմ վրայ. կարծեմ թէ ցորեր եմ : Առջի աշխարհը չերևի աչքիս : Հապա տո՛ւն և ծառերը — ո՛հ, բոլորն ալ ահաւոր տեսք մ'ունին :

«Վիփափաքէի որ տուն դառնայիր, սիրելի Պօղ, կեանքս այսչափ

դատարկ չպիտի լինէր : Լիլի շատ բարեսիրտ է , սրաովին շնորհապարտ եմ անոր : Բայց մեռնողն իր հայրը չէ :

* * * « Էիմակ աւելի հանգարտ եմ , Լիլին հետ կ'գտնուիմ : Աշխարհ առաջուանէ փոքր կ'երևի ինձ , բայց երկին աւելի լայնարձակ . մեր ամենուն համար տեղ կայ անդ , Պօղ , եթէ միայն այն տեղը փնտռենք : Ա՛րսեն թէ հայրենիք պիտի վերադառնաս . շատ ուրախ եմ : Թերևս կ'դժկամակիս այն քու սիրուն էնրիքայէն հեռանալ , բայց եկուր , Պօղ : Այնպէս իմն կ'երևի ինձ որ աւելի պայծառ կը տեսնեմ այժմ և աւելի համարձակ կ'խօսիմ : Չպիտի դտնես փոքրիկ Ջապէլը , վասն զի այժմ աւելի տարւօք եմ , և իմ բնութիւնս աւելի ծանրաբարոյ . իսկ տառապանքս զիս աւելի — շատ աւելի տկարացուց :

* * * « Դիւրին չէ ինձ զրել . բայց պարտաւոր եմ ըսել թէ հասկըջայ ո՞վ է քու Գարօյինդ : Շատ տարի առաջ , երբ տունէն տարակայ կ'գտնուէիք , անոր հետ դպրոցն էի : Միշտ միասին էինք : Ա՛ղարմահամ թէ ինչպէս շուտ մը չդտայ ըրած նկարագրէդ թէ այն ո՞վ է . միտքէս անգամ չէր անցներ այս բանս : Սիրուն աղջիկ մ'է , և բոլոր սիրոյդ արժանի : Այնուհետև անգամ մը տեսայ զինքը , խօսեցանք քու վրայ . նա լաւ — շատ լաւ խօսեցաւ , ասկէ աւելի չեմ կարող ըսել , վասն զի աւելի չգիտեմ : Ա՛հ , Պօղ , երանի թէ երջանիկ լինիս , կ'զղամ որ իմ վախճանս մօտ է :

* * * « Իմ սիրելի Պօղ , ըսածս է , քիչ մ'ես պիտի գրեմ . ձեռքս այժմ կ'դողայ : Բայց սրտորաստ եմ : Փառաւոր աշխարհ մ'է ասկից վեր գտնուող աշխարհը — հաւաստի եմ որ փառաւոր է , և անդր իրարու պիտի հանդիպինք : Այուսացի վերստին տեսնել քեզ և ձայնդ լսել : Աեանքս շատ անկայուն է . կարծես թէ բոլորովին իմ երթալիք աշխարհս կ'ապրիմ . ահա է իմ մայրս և իմ հայրս և իմ պզտիկ եղբայրս : Պիտի իրարու հանդիպինք — այո , զիրար պիտի տեսնենք :

* * * « Աւերջին տողս է այս , Պօղ : Այլ ևս չեմ այս աշխարհէն , երջանիկ եմ . . . շատ երջանիկ : Դու պիտի դաս ինձի : Այլ ևս չեմ կարող գրել : Թող բարի հրեշտակները քեզ պահպանեն և քեզ երկին առաջնորդեն : »

— Միթէ շարունակեմ :

Բայց կենաց բեռն իմ վրայ է : Առանին վիշտեր մեծ հերկային ոյժն ու ծանրութիւնը չեն խորտակեր : Աենաց լաւագոյն կէսն իմ առջևս է : Պէտք է որ արդեամբ և գործով նկրտի այն : Եւ օրհնեալ լինի :

Աստուած , յուսոյ նշոյլներ կ'երևին ինձ հեռուն : Անուշ Գարօլինն , որ այժմ կրկնապատիկ սիրելի է ինձ , վասն զի Զապէլի կորուստն ինձի հետ կ'ողբայ , պէտք է որ փնտռեմ :

Եւ ԿԷՍՕՐ կ'նուաղի երբ անոր անուշ նկարն իմ աչաց առջև կը ծփայ , և Երեկոյեան ստուերներն երկրի վրայ կ'տարածին :

Գ

ԵՐԵԿՈՅ

Ապրիլի մեծ երկիր մ'է . ինչպէս լոյս ու ստուեր , մերթ պայծառ , մերթ մութ , մերթ ծանր , մերթ շուտ կ'հաւաքուին անոր վրայ :

Հպարտութիւնն ու Փառասիրութիւնն անոր դաշտայ վրայ մեծ դղեակներ կ'կառուցանեն , լեռներու վրայ մեծ յիշատակերաններ , որ դէպ ուղիղ երկին կ'սլանան և իրենց դադաթները յաւիտենականութեան մէջ կ'ծրարեն : Ասկա կ'պատահի դետնաշարժ մը , յուսահատութեան , վհատութեան կամ անգործութեան շարժն , և զանոնք վար կը կ'տարալէ : Աղէտք ամենուրեք ողբ ու կոծ կ'սփռեն , աչքը միայն քար ու քանդ կ'տեսնէ , և ոչ այլ ինչ : Փոքր առ փոքր արևը կ'ծաղի . ինչպէս այժմ հեռաւոր ամպին մէջէն . . . և հողին կ'կենդանացնէ :

Համբաւը կ'հրամայէ՝ երկնից բարձունքը բազմած . և Ռւրախութիւնն այս տեսլեան խնդութեան աղաղակ մը կ'արձակէ : Հաղար տեսակ խորհուրդներ սիրտդ կ'յուզեն , տուք է ձեռքդ , և բազմատենչ դործի համար . դուխդ խանդաղին կ'դործէ , և այդ աւիւնն քեզ մերթ այս մերթ այն կողմը կ'մղէ : Արեւի է կ'տեսնես ժիր , ուշագիւր վատակաւոր մ'որ երբեմն քան քեզ յետադէմ էր , իսկ այժմ՝ ծանրորէն այլ ապահովի կ'աշխատի կենաց ասպարիղին մէջ , մինչև որ ապաղային հորիզոնին վրայ շարժող փալիլուն ստուերները բռնէ . այս տեսքը քու հողիդ անհնարինս կ'բորբոքէ , և տենդային եռանդովսոյն վատակաւորին ետեւէն կ'սնդես : Բայց բարեբաղդ դործաւորն այդպէս դործելով չէ առաջդացած : Իր բաղուն անվրդովէ , իր ըղեղը պաղ , իր աչքն անխուով է և ստոյգ :

Ապագան մեծ երկիր մ'է . մարդ մը չէ կարող անոր շրջանն ընել մէկ օրուան մէջ, մէկ ոսախնով չէ կարող չափել զայն, չէ կարող իր հունձքը մէկ կապոց ընել : Տեսլէն աւելի լայնատարած է, անեղր է :

Սակայն միշտ, օրէ օր, ժամէ ժամ, դաժան Ներկայն մեղ կ'մղէ Ապագային կողմը : Մեր հողին անոր կ'դիմէ ինչպէս կ'դիմէ հայրենի յարկը . կ'սլանայ՝ ժամանակ և անջրպետ թողլով՝ դէպ մոլորակներն ու արեւը, դէպ ՚ի հեռաւորացոյն աստղեր ու դիստոններն, մինչև որ՝ կոյր թրթուրներուն պէս՝ անհանութեան բոցին մէջ կ'կորսուին, և միայն բնազդումս զօրութեամբ մեր երկիրը զաւու համար ետ կ'դառնան :

Ի բաց վանէ Ապագայն — նոյն իսկ այն փոքրիկ Ապագայն որ մեր կենաց ԵՐԵՎԱՆԻ է — և ինչպէս անէութեան մէջ կ'զլորինք : Հրամայէ հողոյն որ ներկային եղբրքն արշաւէլէն դադրի, և այն ատեն ինչ մոռնող պիտի դանէ այդ հողին :

Ես կ'ախորժիմ՝ դեղերիլ անդ և անցնող կենաց մէն մի օրն զալիք կենաց օրուան հետ հիւսել — այնպէս սերտիւ որ այս միութեան անդէտ լինիմ : Եւ եթէ այս ընելու յաջողիմ, այն ատեն բոլորին յարմար համեմատութիւններ պիտի տամ և քնական նկարներ, այն օժոյցներուն նման, որոց վրայ մարապետներն քիչ քիչ կ'ործեն և զանազ իրենց կենաց հետ կ'աւարտեն, կամ այն գոհաւոր պատկերներու նման, որով բանահիւսարհետապէսները հին և հսկայաձև տաճարներու դմբեթները զարգարած են — որ ՚ի սկզբան լոկ ծիրանեղոյն և կապոյտ ձեփուկներ (daubs) կ'երևին՝ մինչդեռ կուսակի վրայ քիչ քիչ կը շինեն, բայց երբ ամբողջանան վայելուչ և շքեղ կ'փայլին :

Բայց հողին միայն համբաւոյ բնակած փայլուն բարձունքը չթափառիր ուր իր փետուրներն ծափահարութեան զեփւրով կ'ծածանին, ուրիշ բաղձանք ևս ունի որ Ապագային վրայ համասփիւռ կ'տարածին : Մենք միայն իմացական գործող մեքենաներ չենք, այլև ընկերային կնճիռներ, որոց լուծումն կենաց գործն է : Որքան որ հողին երևելի հանդիսանալու արեքցուցիչ ուրախութեան յուսով կ'համակի, ուրիշ հակում մ'էս ունի, աւելի խորունկ և զօրաւոր, դէպ ՚ի այն հաճոյից որոց սիրտը կ'տենչայ և որոց շրջանին մէջ բարեյօժար զգացումները կը ծաղկին և կ'հասնին :

. Մարդ կրնայ իր ջերմ զգացումները սրահել . կրնայ զանազ ընդ աղօտ նկարել, կրնայ իր նաւարկութեան աշխարհացոյցէն սրբել, ուր միայն առուտուրի համար նաւահանդիստները կ'նշանակէ, թակայն դարձեալ իր սրտին խորն Ապագայի մեծ աշխարհին վրայ կ'դժադրէ :

սիրոյ և ինդութեան զուարճալի կղզիները : Անդ վտաճ է գեղերիլ , երբ իր հողին կ'սուղի այն անդորր ու սուրբ յոյսերուն մէջ որ գէպ 'ի երկին կ'սլանան :

Սէրը միայն այս ասպաղային դռները կ'բանայ , ուր երանելիաց կղզիները կ'գանուին աստղերու պէս : Սէրն առ Աստուած պատուանդան մ'է : Սիրտը միայն անբաւութեան չափն է : Միտքը մեծութեամբ կը տաղտկանայ . . . սիրան ոչ երբէք : Մտածութիւնն ձանձրոյթ և տկարութիւն կ'զգայ երբ անհուն տարածութեան մէջ իր թիւը կ'առնու , բայց սէրը Բարձրելոյն դահլին բոլորախիբը կ'սաւառնի , երանութիւն և զօրութիւն վայելելով :

Ձգխեմ թէ այլք ինչ խորհին այս մասին , բայց ես կ'հաւատամ որ սիրան աւելի ժիր և դործօն հիմնադիր մ'է այն յիշատակներուն որով Ապաղային աշխարհն աւելի ևս կ'զարդարէ քան թէ միտքը : Այս շինութիւններն փառասիրութեան կանդնած վեհ բուրդերուն չափ չեն բարձրանար , իրաւ , բայց անուշահոտ կղզիներու պէս կ'երևին ծովու մը վրայ , որու ծիածնքը մշտաւ անբողջնակութիւն մ'է :

Եւ հիմակ որ ԵՐԵՎԱՆԻՆ կողմը նայելով կ'խորհիմ , երեկոյ մ'որ արդէն հասաւ , Անյելոյն յիշատակներով համակուած , և ներկային վիշտերով շուարած — իմ սիրայօժար զղացումներս ասպաղայ պատասպաւանը հիմնող ճարտարապետն են : Եւ դէթ երևակալութեամբ զայն պիտի հիմնեմ անվեհեր : Թերևս երեկոյեան պատահական ստուերներով մթին և տխուր պիտի թուի այս ասպաւէնս , բայց վերջապէս կ'յուսամ որ արևը մտրը պիտի մանէ , երբ օրն աւարտի՝ ծիրանի և ոսկի պոյներով շքեղափայլ :

ԳԱՐՕԼԻՆ

Ըսի որ , թէ և դմենայ և ջերմ էր 'սերկայն , սակայն Ապաղային վրայ լուսոյ զուարթուն շողեր կ'փալիւէին : Բնչպէս կարելի է ուրիշ կերպ լինիլ , քանի որ այն անուշ էակը որու առաջին անգամ լայնատարր ուղիւնու վրայ հանդիպեցայ , և որու անունն իսկ Զապէլի հօդեվար շնչով սրբացած է , իմ ապրած աշխարհին երեսը կ'ապրի : Զիս պաշարող ամէն անձկութեանց մէջ՝ երբ 'սերկայէն Ապաղային կ'թափառիմ , իր նկարին , իր ժպտին , իր յետին հրաժարական ողջունին տեսին՝ իմ շաղկիս վրայ արեւային նշոյլ մը կ'սփռէ :

Եւ դարձեալ , ինչո՞ւ համար : Միթէ անտի յոյս մը չէ այս : Տա-

քիներ անցան զինքը տեսնելէս 'ի վեր . և ոչ իսկ դիտեմ թէ ո՞ր կը գտնուի : Ա՞նչ վերաբերութիւն ունի նա ինձի հետ :

Սիրտս կ'փոփայ « շատ ու շատ » : Բայց իմ հստատութեան ատենս այս ձայնին չեմ անսար : Նէ կին մ'է , արդարեւ զեղանի կին մը , զոր մի անգամ տեսայ : Նէ կ'աղբի , բայց պիտի մեռնի , կամ պիտի կարգուի . թերեւ քիչ ատենէն այս մասին լուր ստանամ , և թերեւ հառաչեմ . . . : Պիտի մեռնամ այն անուշ օրիորդն որ ինձի հետ ուլկիւս նոսի վրայ էր , և պիտի երեւակայեմ թէ մեռած է : Այս առնական հոգին զօրաւոր է , եթէ միայն այսպէս խորհինք . կարող է վիշտերն առ ոչ ինչ դրել և ըստ հաճոյս վեր 'ի վայր շրջել իր յոյսերուն նշանակները :

— Բայց ո՞չ , չեմ կարող . որքան այսպէս խորհիմ , իրապէս նոյնքան ասոր հակառակը կ'խորհիմ : Երբ այս վտիտ օրիորդին մէկ ժպտան անդամ յիշեմ , իմ բոլոր խորհուրդներս կ'ընեն , որպէս թէ առանց ներա իմ խորհուրդներս ոչ ինչ են :

— Վա՛յ , կ'ըսեմ , ի՞նչ անողի բան , և իսկոյն իմ ուշ զիջքերու մէջ կ'իմացեմ և երկար ժամեր կ'սլարապիմ . բայց քանի ժամերն երկարին և զլուսն ծանրանայ , և երեկոյեան ստուերներն իմ բոլորտիքս դառնան , վերստին կ'ներկայի ինձ այն անուշ կարն' զողտրիկ հեղինու թեամբ մը . « Սնտով' բան » : Եւ ես անոք անօգնական կ'մնամ , իմ ճամբէս կ'շեղիմ յուսալի և խնդալի , և կ'դիմեմ այն ոսկի դռներն որ Ապոլլայն կ'բանան :

Բայց այս վիճակին մէջ կ'մտնեմ այն լուին ժամերուն մէջ երբ մարդ միայնակ է , և անաշխատ : Յերեկն կամ աղմկալի աշխարհին մէջ՝ այսպիսի խնդալին անուրջներու դէմ կ'զրահաւորի : Պաղէ և անհոգ , և պատրաստ 'ի ցաւ և 'ի պայքար :

Օր մը ճամբորդելու կ'եննեմ : Քանի մը ներկայ հոգեր միտքս զրահած են , և կ'մտածեմ թէ կենաց ուղեորութիւնն ի՞նչ կերպով աւելի անդորր ու ախորժելի կրնամ ընել : Իմ առջևս պարզեալ տեսարանին և նոր դէմքերու վրայ կ'նայիմ անտարբերութեամբ մ'որ տարիներու արդիւնք է : Ձկայ կողակից մ'որ համակրութիւնը զրաւէ , չլան որդիք որոյ հետ խաղալ կարենաս . իմ բարեկամներս սակաւ են և ցիր ու ցան , և լուի իրենց դործին կ'սլարապին : Ալիք աստ կ'ապրի , Պէն' անդ . ուրախալի նամակներ կ'դրեն ինձ և ինձի միշտ բարեք կ'մաղթեն : Վիշտերն անդամ մաշելով թեթեւան , և այնպիսի անհոգ վիճակի մը մէջեմ որպէս թէ կ'ըսեմ . — Ընդ առաջ խաղայ , հին աշ-

խարհ, ընդ առաջ խաղայ : Վախճանն ընդ հուսդ պիտի հասնի , և մենք , ողորմելի արարածներ , մեզի պատշաճ եղածը պիտի ընդու-նինք :

Բայց յանկարծ աչքս կ'դադարի գէմքի մը վրայ զոր կարծեմ թէ կը ճանչեմ : Արդ՝ անատրբերութիւնն մշուշի պէս կ'փարատի . և սիրտս կ'տրոփէ — և հին անսիրենքն նորէն կ'հասնին : Ա'նկտեմ այս կերպարանն , որպէս թէ ուրիշ անսիրելիք բան մը չկար : Ճիշտ ներա ձեն է , ճիշտ ներա շնորհն է , պարզ հաղուստն — մաքուր , ճաշակաւոր , դարձեալ ներա հաղուստն է : Իր զլուխը կիսովին կ'զարձընէ . այն զլուխն է զոր Տէվոնի ծառաստանին մէջ՝ մագուսէ գդաղին ներքե տեսայ : Ընդ առաջ չեմ փութար , այլ կ'նստիմ իբր զի հիացման մէջեմ , ներա ամէն շարժումները կ'գիտեմ , ներա անուշութիւնն սրով հոգ կը տանի իր մօրն որ իր մօտ նստած է , ներա անմեղ բացդանչութիւն-ներն երբ սիրուն բան մը կ'տեսնէ : Այսպէս իմն կ'թուի ինձ որ նոր աշխարհ մը կ'պարզուի աչացս առջև , սակայն չեմ կարող մեկնել պատ-ճառը : Իմ տեղէն չեմ շարժիր , կ'խորհիմ և կ'նայիմ ակնապիշ : Չեւքս բռնած թուղթս կտոր կտոր կ'ընեմ , իմ վամպոյցիս շղթային հետ կ'խաղամ և կ'տարելու չափ կ'ողորեմ կնիքս : Ժամացոյցս կ'հանեմ , կ'նայիմ և նորէն կ'ոյցեմ — և սակայն չեմ կրնար ըսել թէ ժամը քանի է :

— «Նոյն ինքն է՞» կ'մրմնջեմ գիտեմ Գէրլէն (Գարօլին) է : »

Բայց երբ մայր ու աղջիկ ոտք կ'եննեն մեկնելու համար , իմ թմրու-թիւնս կ'փարատի . սակայն դողդոջուն վարանմամբ , կերպով մը ներկայ և ապագայ կենաց մէջ գայթ 'ի գայթ գնալով է որ կ'մօտենամ : Իսկոյն զիս կ'ճանչէ , և զիս կ'ողջունէ սիրով — ինչպէս Պէլլա գրեց շատ սիրով : Բայց թեթև շփոթութիւն մը կ'յայտնէ նէ , շփոթութիւն մը որ սրտիս մէջ աւելի մտադիւր կ'պահեմ քան թէ իր ողջոյնը : Իմ ճամբաս կ'փոխեմ և անոնց հետ կ'ուղևորիմ : Եւ սկսինք հին տեսա-րաններու վրայ և կարծես թէ իրենց յիշատակներն կենաց մեծագոյն մասը կ'կաղմեն :

Հինդ տարի կայ իրմէ բաժնուէս 'ի վեր , չյուսալով երբեք որ վերստին իրարու պիտի հանդիպինք : Այն ատեն նէ վտիտ օրիորդ մի էր , արդէն կնային ձև մ'առնելու վրայ է : Իր աչունքն առաջուան պէս սև ու խորունկ են , արտեանունքն , որ դանոնք կ'բոլորեն , ինձ առաջուանէ աւելի երկար կ'երեւին : Իր գոյնը նոյնչափ պայծառ , իր ճա-կատը նոյնչափ չքնաղ , իր ժպիտը նոյնչափ անուշ , որչափ որ էին ա-

հաջ. միայն տրտմութեան մուսլ մը կ'ծածանի իր աչաց վրայ, իբրև մշուշ ամառնային դաշտանկարի մը վրայ : Նէրա նայելու կ'յանդգնիմ, բայց նայելով կ'երկնչիմ : Պէլլայի վրայ կ'իսոյնք. նէ քաղցր, մեղմ ձայնով մը կ'իսօսի, և գէմքին վրայի տրտմութեան ամսլը կ'դիպուի, ամառուան մէդին նման որ արևը կ'նսեմէ : Միավանկ բառեր կ'արտասանեմ. ուրիշ խօսք չեմ կարող գտնել. և իր աչաց մէջ համակրութեան այնպիսի ակնարկ մը կ'երևի երբ այսպէս կ'իսօսիմանոր հետ՝ որ սիրտս իրեն կ'քաշէ այնպէս որ երբէք ժպիտ մը չպիտի կարենար ընել : Ինչ բան կրնայ այնքան արագ հրապուրել սիրտն առլի սիրոյ քան թէ համակրութիւնը :

Բայց այս կ'անցնի. պարտաւոր ենք բաժնուիլ, նէ իր տունն դիմելու, և ես այն ընդարձակ տունն, որ այնչափ աստեղ իմն եղեր էր — այս է աշխարհ : Այժմ քան զառաջինն առելի լայնարձակ, առելի պաղ, և նուազ ցանկալի կ'երևի ինձ : Յուսոյ նոր դիրք մը կենացս մէջ կ'բացուի — առանին յոյս մը :

Քիչ ատենէն իրարու հետ պիտի տեսնուինք՝ միջնաքաղաքն ուր ես կ'բնակիմ : Անհամբեր կ'սպասեմ այն ժամուն, ինչպէս կ'սպասէի պարագայ օրերուն դարձողը . . . : Ի վերջէ կ'հասնի, և երազի պէս կը սահի : Նէրա մօտն եմ որչափ ատեն որ իշխեմ : Նէ վիս մտադիւր կ'ընդունի, և չլինար ուրիշ կերպ վարուիլ : Բայց միթէ ուրիշ տենչ չկայ : Մարդուս բնութիւնն անկուշտ է, և երբ անուշ բարեսրտութիւնը կ'վայելենք՝ առելի ևս կ'սպահանջենք : Գիտեմ որ բարեսիրտ է, և սակայն, ես ալ փոխանակ չնորհասպարտ լինելու, առելի մեծ բարեսրտութեան կ'տենչամ :

Նէ կ'դուշակէ իմ տենչանքս, անտաքակիցս. այս մասին կասկած մի՞ ունենար կնկան մը վրայ : Բայց ի՞նչ ունիմ, կամ ի՞նչ եմ որ փոխարէն մը պահանջեմ : Հրեշտակի պէս անարատ և անուշ է, իսկ ես, ամսն, ողորմելի վիճակով եմ այս աշխարհիս պայքարին մէջ Սատանի դէմ : Երբեմն երբ անախտութիւնս կ'բռնէ՝ իբր թէ իմ ձիրքս կ'յիշեմ — ակուր, ողորմելի սլատրուակ մ'որով ամօթապարտ կ'մնամ երբ նէրա առջևն ելնեմ : Իսկոյն դանոնք կ'վանեմ : Բայց որչափ որ արժանիք չունիմ, որչափ որ իրաւունք չունիմ նէրա սէրն ու ներողամտութիւնը խնդրելու, որչափ որ կենաց պայքարին մէջ առնական դործ մը չեմ ըրած, դարձեալ այս փաստն ունիմ թէ՝ այս սիրտս իրն է :

Նէ կ'մեկնի. և իմ սրտիս մէջ եռացող զգացման վրայ նէրա բան մը չըսի — նրափ կ'անիծեմ իմ յիմարտութիւնս : Գնաց նէ, և թերևս եր-

բէք չպիտի վերադառնայ : Յուսակաւոր կ'ընչեմ իր յետին անուշակնարիլը : Աշխարհ գտարկ կ'երեւի ինձ : Չգիտէ նէ , թերևս փորձեց նէ թէ զինքը կ'սիրեմ : « Լաւ , պիտի քաշեմ այս նեղութիւնս » կ'ըսեմ : Բայց չեմ կարող տանիլ : Գործերս դադար առին , դեռանքս փոշոտած են , կիսկատար բան մը կայ : Ճակատադիրը կ'հրամայէ որ կատարեմ : Չեմ կարող տեղ մը գտնել , ուր որ գնամ ներս անուշ ժպիտն կամ խնդութեան նշոյլ մ'ընծայէ կամ յուսահատութեան սև ստուեր մը :

Սեղանիս առջևը կ'նստիմ զուարճալի գիրքերով . կրակը դեղազուարճ կ'վառի . շունս ինձի կ'նայի երբ անոր խօսքն կ'ուղղեմ . բայց այս բաւական չէ : Նէրա նկարն այս ամէն վայելքն կ'փարստէ կ'տանի : Գրեանքս վար կ'նետեմ , կռնակս շանո կ'դարձընեմ . կրակս կը բորբոքի և կ'շողայ որպէս թէ զիս ծաղրել կ'ուզէ :

Յանկարծ խորհուրդ մը գլխուս մէջ կ'ծաղի . « Ես նէրա պիտի զրեմ » կ'ըսեմ : Եւ ժպիտ մը դէմքիս վրայ կ'շողայ , յուսոյ ժպիտ որ կասկածով կ'աւարտի : Իսկոյն զրիչ կ'առնում , իմ հաւատարիմ զրիչս , և սպիտակ թերթին իմ առջևս կ'տփռի : Լաւազոյն թուղթ և զրիչ չէ կտրելի դտնել : Հարիւրաւոր նամակներ դրած եմ . զիւրին է նամակներ զրել . բայց այժմ դիւրին չէ :

Քանի մը սող կ'զրեմ և կ'աւրեմ : Վերստին կ'սկսիմ , և աւելի կը զրեմ — ասպա դարձեալ կ'աւրեմ : Նորէն կ'փորձեմ , բայց չեմ կարող բան մը գրել : Յուսահատութեամբ զրիչս վար կ'նետեմ , թերթս կ'այրեմ , և զրատունս բանալով Շէֆզդալըրի և Լիզըլըրնի մէկ հին տիպ դործը կ'առնում որ կարգամ , և նոյն միջոցին առանձին կը խօսիմ . « Թող նէ երթայ : Նէ դեղանի է , բայց ես ուժեղ . կեանքը կարճ է , մենք , ես և շունս , և իմ զրեանս , և իմ զրիչս արիաքար անոր մէջ պիտի մաքաւինք , և տապանաքար մը թողլու համար բաւական բան մը պիտի շահինք : »

Բայց երբ այսպէս կ'խօսիմ արտառաք կ'հոսին — բոլոր ըսածներս սուս են : Եւ Շէֆզդալըրին սենեկին մէջ կ'նետեմ և նորէն զրիչս ձեռք կ'առնում : Այժմ կ'սկսի սահիլ թղթիս վրայ , և յոյս կ'վառի , և նէրա կ'սրտոմեմ մեր առաջին տեսակցութիւնն , և ովկիանու վրայ վերջալուսին մեր անցուցած ժամերը , և ալէժուփ նաւուն վրայ մեր անկայուն սպողոնները , և Լոնտօնէն բաժանումը , և սիրուն զիւղին մէջ զինքը տեսնելուս զղացած ուրախութիւնս , և վերջէն կրած վիշտս : Եւ ասպա Պէլլան կ'իշխատակեմ , որ իր և իմ բարեկամուհիս էր , և արտառաք կ'վաղին . և ասպա մեր վերջին տեսութեան վրայ կը

խօսիմ, իմ կասկածներս կ'յայտնեմ և նոյն երեկոյեան մտատանջութիւնս, որով չէի կարող գրել, և հուսկ ուրեմն իմ սրտիս մէջ բան մը զիս յորդորելով սկսայ գրել և ամէն ինչ ըսել։ Գրեցի այն, թէ՛ ձեռն սիրտս իմն չէր, այլ լիովին իրն էր. և եթէ իմն կամենար լինիլ — զինքը պիտի սիրեմ, և միշտ սիրեմ ։

Այն ատեն տեսակ մը երջանկութիւն կ'զգամ, ատրօրինակ աղմկալի երջանկութիւն մը, որու մէջ մերթ ընդ մերթ կասկածը կ'սահի, իրեն հետ բերելով պաղ սարսուռ մը։ Գիրս կ'կնքեմ և զայն կ'տանիմ թղթատունը։ Ծանր նամակ։ Ինչ այնպէս կ'թուի թէ նոյն օրն ուրիշ զիր չպիտի գտնուի, և թէ ամէն կառք և ձի, ամէն սոյլակ, նաւակ յատկապէս իմ միակ դիրս հասցէին տանելու սահմանուած էին։ Մեծ դիր մ'էր ինչի համար, իմ ճակատագիրս անոր մէջն էր։

Այն դիշերը լաւ չեմ քնանար. անհանգարտ քուն մ'է. մի անգամ խնդութիւնը՝ անուշ և սրբանուէր խնդութիւն մը իմ երաղիս մէջ կ'ըզզամ և հրեշտակ մը իմ քովս է. ուրիշ անգամ հրեշտակը կ'անհետի, պայծառութիւնը կ'մարի, և ահաբեկ կ'արթննամ։ Հատ դիշերներ այսպէս կ'անցնեն, մինչև որ կ'հասնի այն օրն երբ պատասխանի մը կ'սպասեմ։

Գրաբերը բնաւ մտքէն չանցնէր որ ինչ յանձնած թուղթը — թէև ոչ մուրհակներ, ոչ արժէթուղթ, ոչ առևտրական յօդուածներ չպարունակէր — սակայն իմ ասպաղայ կենաց վրայ աւելի մեծ ներդրածութիւն պիտի ունենար քան յառաջագոյն բերած բոլոր նամակները։ Բայց ես չեմ յայտնէր անոր այս բանը, նոյնպէս չեմ ցոյց տար թէ ինչ անձկանօք զայն կ'ընդունիմ, կ'առնում, կ'կրեմ զայն՝ որպէս թէ մեծ և ահաբեկ բեռ մը լինէր, և սենեակս կ'մտնեմ, դուռը կ'փակեմ և դողահար ձեռօք կնիքը բանալէն ետև՝ կ'կարդամ։

ՆԱԽԱԿ

«Պօղ — վասն զի կ'յուսամ որ կարող եմ այսպէս անուանել քեզ այժմ — չգիտեմ ինչպէս պատասխանեմ քեզ։ Գիրդ ինչ մեծ խնդութիւն պատճառեց, բայց պատճառեց նաև վիշտ։ Չեմ կարող, չեմ կամիր երբէք կասկածիլ դրածիդ վրայ. կ'հաստատեմ որ իմ արժանիքն աւելի կ'սիրես զիս, և դիտեմ որ այդ բոլոր դժվարիք արժանի չեմ։ Բայց զիս վշտացնողն այս չէ, վասն զի դիտեմ որ վեհանձն սիրտ մը ունիս, և ինչպէս միշտ՝ դարձեալ իմ տկարութեանս պիտի ներողամիտ գտնուիս։ Մեծ փառք, այն, մեծ փառք է ինչ որ կարող եղայ սէրդ»

դրաւել, բայց ցաւ է ինձ՝ թերեւ կարծածէ՞ք աւելի ցաւ մը, քանի մտածեմ որ չեմ կարող իմ փափաքիս համեմատ սպաստախանել քեզ — աւանդ, երբէք ։»

Աստանօր դիրը գետինը կ'նետեմ՝ և ձեռքս ճակտիս վրայ դրած՝ կ'գիտեմ բոցավառ ամուխներն՝ արադ և մեծածայն շունչ առնելով ։

Վերստին կարդալու կ'սկսիմ ։

— «Գիտես որ՝ իրարու հանդիպելէն առաջ՝ հայրս մեռաւ ։ Վաղէմի բարեկամ մ'ունէր որ Անկլիայէն եկած էր, և որ շատ տարի առաջ մեծ ծառայութիւն մը մատուցեր էր իրեն, այնպէս որ իբրեւ եղբայրը կ'սիրէր ։ Երբ իմ հայրս մեռաւ, զիս իր մօտ կանչեց և ըսաւ . «Քերի, ես պիտի բաժնուիմ քեզնէ, բայց իմ հին բարեկամն քու հայրդ պիտի լինի՝ և իմ ձեռքս անոր ձեռքին մէջ դնելով՝ ըսաւ . «Իմ աղջիկս քեզի կ'տամ» ։

Այս ծեր պարոնն քան զիս տարեւոր որդի մ'ունէր, բայց ստէպ միասին էինք, և իբրեւ եղբայր ու քոյր մեծցանք ։ Հսկարտու թեամբ անոր կ'նայէի, վասն զի բարձր էր և ուժեղ, և ամէն մարդ զանի աղ ուր կ'գտնէր ։ Նոյնպէս՝ եղբօր պէս սիրով էր ինձի հետ, և իր հայրն իմինիս կ'նմանէր ։ Ամէն մարդ կ'ըսէր և կ'հաստատար որ օրին մէկն իրարու հետ պիտի կարդուինք, և մայրս ու նոր հայրս բացէ՛ր բաց նոյն բանը կ'խօսէին ։ Նոյնը կ'կրկնէր և Լօրէնս — վասն զի այս է իմ բարեկամիս անունը ։

«Պօղ, հարկ չկայ աւելի ևս զրել քեզ, վասն զի՝ երբ տակաւին փոքր աղջիկ մ'էի՝ իրարու խօսք տուեր էինք որ օրին մէկն այր ու կին լինինք ։ Լօրէնս ընդ երկար կեցաւ Իտալիա, և կարծեմ այժմանգ է ։ Ծերունի հայրը զիս գեռ ևս իբրեւ իր դուստրը կ'զգուէ, և անհամբեր կ'սպասէ այն ժամուն երբ իր առնը պիտի հարս երթամ ապրիմ ։ Լօրէնսի զիրենն շատ սիրաւէտ են, և թէև առաջուան պէս մեր ամուսնութեան վրայ ստէպ չխօսիր, սակայն կարծեմ թէ պատճառն այն է որ իբրեւ ապահով կ'համարի ։

«Այս ամէնն առաջուց քեզի իմացընելու փափաք ունէի, բայց հիմարձակեցայ ։ Թերեւ եսասէր համարիս զիս որ սահեցի ցարդ ։ Եւ այժմ ինչ կարող եմ ըսել ։ Լօրէնս ինձի համար բոլորովին եղբայր մ'է, իսկ դու Պօղ — բայց պէտք է որ լռեմ, վասն զի թէ որ Լօրէնսի հետ կարդուիմ, և բազմն սյսպէս տրամադրած կ'երևի, պիտի ջանամ ամէն բանէ աւելի սիրել զանի ։

«Բայց դու ինձ եղբայր մը չպիտի լինիս . զիս չպիտի սիրես , ինչպէս
պէս կ'սիրէիր երբեքն Պէլլան : Ա՛րսես թէ նէրա աչերն ունիմ , և
իմ ճակատս ալ նէրա ճակտին կ'նմանի : Մի՛թէ չէս կարծեր որ իմ
սիրտս ալ անոր սրտին նման է :

«Պօղ , եթէ այս նամակիս վրայ արտօսը թափես , զիտյիր որ ես
ալ քեզի պէս թափեցի : Այժմ աւելի չեմ կարող զրել :

«Մնաս բարեալ : »

Ա՛նտիմ և ակնապիշ կ'դիտեմ կրակին փայլը , և երբ կ'սթափիմ ,
ճակատադրին դեմ անէծք կ'կարդամ : Գարձեալ՝ բոլոր ապադաս
մութ կ'երևի աչքիս : Չեմ կարող Բէրին սիրել ինչպէս սիրեցի Պէլ-
լան . չէ կարող նէ քոյր մը լինիլ ինձի համար , պէտք է որ քան
զքոյր աւելի լինի , կամ ոչ ինչ : Գարձեալ՝ կենաց ալէժուփ ծովուն
վրայ միայնակ կ'ծփամ և իմ շուրջս զուարթ ակումբներ կ'տեսնեմ : Այլ
փայլի արևն ամէն տեղ , այլ ոչ իմ պաղ ճակտիս վրայ : Արծեո թէ
յերկինս ողորմութիւն չկայ ինձի համար և ոչ զթութիւն Երկրի վրայ :

«Բանի մ'օրէն՝ այս նամակին պատասխան մը կ'դրեմ : Բայց դառն
պատասխան մ'է , ինքզինքս կ'մոռնամ իմ աղէտից բռնութեան ներքեւ
և մինչև անդամ՝ յանդիմանութիւններ կ'արտադրեմ :

Նէրա պատասխանն՝ որ շուտով կ'հասնի , քաղցր է և համբոյր :
Իմ յանդիմութիւններս զինք վիրաւորեր , կարելիէր վիրաւորեր են :
Բայց սրտաշարժ բարութեամբ մը՝ որու ես արժանի չեմ , իմ աշխու-
ժութիւնս վիրաւոր սիրոյս կ'վերադրէ : Նէ կ'սփոփէ զիս , սակայն՝
սփոփելով՝ աւելի ևս կ'վիրաւորէ : Ա՛ջանամ՝ հատալու խօսքին՝ երբ
իր անարժանութեան վրայ կ'խօսի , բայց չեմ կարող :

Գործերն , և փառասիրութեան կամ շահու հետադօտութիւններն
կ'սահին կ'անցնին անզղայ , շունչուն մեքենայի պէս : Պարտաւորու-
թիւններ կան զարս արիութեամբ կ'կատարենք իրաւ , բայց առանց
խնդութեան : Մեծ է մեր քաջութիւնն՝ երբ աշխարհի հարուածներն
ու փորձանքը մեր վրայ կ'հասնին , բայց բիրտ , անհոգ քաջութիւն մի
է , որ ընդդիմութեան մէջ կ'պանծայ : Ա՛ծիճաղիմ որ և է վտանգներու
կամ նենդաւոր ծուղակներու առջև : Դ՞նչ են ասոնք ինձի համար , ու-
նիմ բան մ'որու կորուստն ինձ ցաւ պատճառէ . իմ շունս իմ քօլս է ,
ներկայ է իմ պառակնան , պատրաստ իմ կերակուրս , զօրեղ են սրունքս ,
ուրիշ ի՞նչ բանի պէտք ունիմ :

Ամիսները կ'սահին , և իմ երեկոյեան արևուս վրայ ծածանող ամպը
կ'անցնի :

Լօրէնս՝ որ դուրսերը կ'ըմբարձուի և Գարօլինին իբրև քրոջ կ'ղրէ ,
ասոր հօրը փափաքածէն աւելի բաներ կ'ղրէ : Կա նոր դէմքեր անսեր
է , շատ անուշ դէմքեր , մանուսնոգ այնպիսի անձի մը սէր կապեր է
որուն նկարագիրը բացորոշ կ'երևի իր նամակին մէջ : Ծերունին չկամիր
որ այսպէս իր փոքրիկ Գարօլինն 'ի կորուստ մնանէ , և Լօրէնսին
յանդիմանական զիր մը կ'ղրէ : Բայց Լօրէնս՝ իր Գարօլին քրոջ բարե-
սրտութեան և զթութեան կ'ղիմէ : Ծերունին կ'զարմանայ թէ ինչ-
պէս Գարօլին Լօրէնսի կողմը բռնելով այսպէս տարօրինակ կերպով իր
որդին կ'պաշտպանէ : «Ուրեմն ինչ պիտի ընես , Գարօլին» կ'հարցունէ
ծերունին :

«Սուգերու մէջ մտնելով , տէր իմ , քեզ և Լօրէնսն ընդ միշտ պի-
տի սիրեմ :»

Այն ատեն ծերունին իր զրկաց մէջ կ'առնու զանի և կ'ըսէ . «Գա-
րօլին , Գարօլին , դու շատ բարեսիրտ ես , և այն վայրենի Լօրէնսը
սիրոյդ արժանի չէ :»

Այնուհետև մեր նամակներուն ոճը կ'փոխուի : Լի են յուսով — որ
կ'փայլի ապագայ երկնից երեսը : Գործ , հող , վաստակ կ'սահին այն-
պէս որպէս թէ հրեշտակ մ'անոնց նոր ոգի կ'աղղէ : Երկին քիչ քիչ կը
ժպտի , թռչուններն անուշ կ'երգեն , և քեզ նոր կենդանութիւն կ'ներ-
շնչեն : Մարդիկ զուարթ դէմքով կ'երևին քեզ , փոթորիկներն իսկ
զուրթ ունին՝ որ իրենց կաողութեան մէջ կ'փայլատակի :

Ամռանն այն օրերն երբ պիտի կարենաս զանի քու կենակիցդ կո-
չել : Վասն զի նէ ըսաւ , իր մայրն , ըսաւ , բարեսիրտ ծերունին որ
կ'յայտնէ թէ միշտ իր հայրը պիտի մնայ , նոյնը կրկնեց . ամէնքը քեզ
փրկողն ընդունեցան , իմանալով սիրային յարակցութիւնդ , և երջան-
կութիւնդ չափ չունի : Մտմտուք մը միայն խնդութիւնդ կ'վրդովէ :
Միթէ ճշմարիտ է , և եթէ ճշմարիտ է , միթէ արժանի ես վայելե-
լու : Միթէ միշտ պիտի սիրես , ինչպէս որ խօսք տուիր , այն հրեշ-
տակն որ խօսքդ կ'ընդունի և իր երջանկութիւնը քու հաւատարմու-
թեանդ վրայ կ'հիմնէ : Միթէ դաժան հանգամանք չունի՞ս բնու-
թեանդ մէջ , որով կ'երկնչիս թէ մի գուցէ զոյցայ նէ քու սիրոյդ և
զթութեանդ վնասհեւուն : Եւ այն բարեկամներն որ ներա վրայ կը
հսկեն՝ իբրև իրենց աչքին լոյսը , միթէ միշտ պիտի դո՛հ ընես իրենց
զանձն անով թար պահելով : Միթէ այս դանձ մը չէ՞ որ քեզի խնդ ու
միանգամայն երկիւղ կ'աղղէ :

Բայց այս ամէնը կ'մոռնաս երբ ներա ժպիտը տեսնես . ներա բարե-

որոտութիւնը , անուշութիւնը , համեստութիւնը չսխալեալ թողուն քեզ յիշել այս բանը : Այսպիսի խորհուրդներ կ'աբխէին , և այնպէս հնազանդ կ'դտնուիս նէրա , որ մօր անդամ այդչափ հնազանդութիւն չէս ցոյց տուած : Եւ եթէ դործերդ և աշխատութիւնդ անտես կ'առնուս , ի՞նչ փոյթդ է : Ի՞նչ է շահն , ի՞նչ համբաւն երբ կ'բաղդատես սրտիդ երանութեան հետ :

Ամուսնութեանդ օրը կ'հասնի , և կարծես թէ երազ կ'տեսնես : Ամէն ինչ լաւ կ'խորհիս , և ամէն աշխարհի համար լաւ բաներ կ'մաղթես : Գլխաւորութեան ճառադայլթ մը կ'սփռի բոլորակը : Եւ երբ նէրա մօտ կ'նստիս այդուն , կամ այն իրկուն որու հետեւեալ օրն զանի քու կինդ պիտի կոչես , և խօսիս ապաղայ յօյսերու և անցելոյն անուշ ստուերներու վրայ , և Պէլլայի սիրոյն , այս քաղցր քրոջ մահուան վրայ հառաչես , նոյնպէս Լօրէնսի , իբրեւ նոր եղբօր մը վրայ որ իր հարմապուհին հետ տուն կ'դառնայ խնդաղին , և այսոք նէրա այտին վրայ կ'դնես , կեանքը մշտատեւ արեւ մը սկիտի երեւի քեզ որ երբեք զիշեր չունի :

Հարսանիքը կ'կատարուի , նէ քոյդ է — քոյդ ընդ մշտ :

ՆՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Վերստին ծովու վրայ եմ , բայց ոչ մինակ : Առաջին անգամ ուղիս նու վրայ հանդիպած անձն ահա այժմ իմ մօտս է : Վերստին նէրա անկայուն քայլը կ'կաղուրեմ նաւուն կամիջին վրայ . երբեմն վաղանա ցուկ հաճոյք մ'էր , այժմ հաճոյքը նուիրական է :

Երբեմն այն երկիւղը զոր կ'զգայի՝ երբ փոթորկալի ամպեր կ'հաւաքուէին , և զիշերը կ'հասնէր , և նաւը կ'շարժէր զայլադին , և ահաւոր կոհակներ զիղուելով սահուն լեռներու պէս վեր կ'ելնէին ու կ'իջնէին և իրենց ոյժը կ'սպառէին ալետանջ նաւուն դէմ , ետական երկիւղ մ'էր , բայց հիմակ այնպէս չէ : Ճշմարիտը՝ հազիւ թէ երկիւղ կ'զգամ , վասն զի փոթորիկն ի՞նչպէս կարող է նէրա փնտել : Միթէ երկին այսպիսի բարեսիրտ եակի մը դէմ իր բարկութիւնը կ'ըստի :

Եւ հանդարտ զիշերներն — նաւի բական զիշերներ — նաւուն եզրին վրայ կ'շնորհեմ և ինչպէս ատեն մը , վարն մութ անդունդը կ'զիտենք և ծովային նաւաղներ կ'երդենք և մեր սիրելիներուն վրայ կ'խօսինք , և աստղերը կ'նկատենք , որ մեզի դրացի կ'երևին , իբր թէ մեր մտե-

ըմբ բարեկամներն են : Եւ երբ ծագեալով մեզ վեր վար ծովային հովիտներու և բլուրներու վրայ կ'տատանէ , կարծես թէ բնութեան մեծ սրտին զարկերն են՝ որ մեզ կենաց նպատակին և դէպ 'ի երկնից դուները կ'մղեն :

Հորիզոնին վրայ երեցող նաւերը կ'նշմարենք որ դէպ 'ի մեզ իջ դան , իբրեւ սուտ բարեկամներ , իրենց առադաստներուն վրայ արեւը կ'փայլի , ասլա կ'շեղին և կ'մահնին՝ իրենց փայլուն առադաստներն ստուերային կողմերը դարձնելով : Երկարաթե թռչուններ կ'դիտենք որ ժամառ ժամ՝ զուարթուն խորհուրդներու պէս՝ կոհակները քերելով նախ նաւուն առջնէն սրանալով և ասլա ետնէն՝ մինչև որ ջրերու փոսերու մէջ անհետ կ'լինին :

Վերստին կեանքը կ'ծաղկի՝ ինչպէս երբեմն կ'ծաղկէր՝ բայց ցաւ , վհատութիւն և ապարդիւն խորհուրդներ այլ ևս չեն վրդովէր զիս : Ապաղան է որ ծովու պէս հաւասար դարձաւ , և եւ իմ քովս է , այս ապաղային հաղորդակից էակը , որպէս զի ինձի հետ դիտէր դեղաձուփ ջուրն , և մեր ու ցամաքին մէջ դսնուող հիասքանչ ծփանքը համէ : Բիւր սիրուն խորհուրդներ մեզ կ'սրաշարեն և կ'հեռանան , մեր ետև ձգած ալեաց պէս , որիշ բիւրաւոր զուարթուն յատակադծեր մեր երևակայութեան մէջ կ'ծաղկին՝ մեր առջև փայլիլով ալեաց պէս : Կ'խօսինք Լօրէնսի և իր ամուսնոյն վրայ զոր քիչատենէն պիտի տեսնենք , կ'խօսինք ներս մօր վրայ որ հիմակ իսկ կ'դիտէ հովերն որ կ'օրորեն իր զաւակն ուլկիանու վրայ , կ'խօսինք այն բարեբաղդ ծեր մարդուն , կնքահօրը վրայ , որ հօր մ'օրհնութիւնը տուաւ անոր , իջ խօսինք մեղմիկ վերջալուսին՝ Զապէլի վրայ՝ որ կ'ննջէ :

Վերջապէս արեւը մարը կ'մանէ , շրայծառ զիշեր մ'է , Գօրնվալի և Տէմօնի ափերուն կապուտակ գիծը կ'նշմարենք : Գիշերայն՝ նաւեր ստուերի նման լուսաւոր լապտերներով մեր քովէն կ'անցնին , և առտու Ուսպդ կղզեկին գեղնադոյն ժայռերը կ'տեսնենք . . . Լոնտօն՝ իր մշուշով , դղրդիւնով և խուժանով՝ երբեմն իմ աչքին ունեցած հրապոյրը չունի , այս դղրդիւնն ու խուժանն կ'օգնեն մարդուս իր վիշտերը մոռնալու և սքանչանալով ապշելու , բայց այժմ՝ այսպիսի մոռացման մը պէտք չունինք : Հէմքըն Բրդիէն սահող անտառուտ գետեզրին երկայնքը կ'ընթանանք , և դէպ 'ի Ռիչմոնտ Հիլ կ'քշենք , որպէս զի այս ջրային և դաշտային տեսարանին վրայ զմայլինք , որ տերեւալից ծառերով և սլայծառ գիւղական տնակներով , թխադոյն հիւղերով և խմբադին շէնքերով զարդարուած են — այս ամէնն Թեմզի ճոցը կ'սփռին

զեղեցկութեան քօղի մը պէս : Բայց չենք կարող աստ զեղերիլ , և ոչ Վինտըըը Գօրէստի Հինօրեայ փառաւոր պուրակներու ներքեւ , այլ կը փութանք դէպ 'ի Տէվօնի անուշ երկիրն , որ իր առունքովը դալաբաւէտ կ'ծաղիկ :

Առաջուան պէս կաղնիներու ներքեւ կ'ըմբռնենք նորէն , և ողորկ այծեամբն իր աղու աչերով առաջուան պէս մեզի կ'նայի : Սկիւռներն թաւերուն մէջ կ'խաղան աներկիւղ , և քանի մը թափառիկ ճագարներ՝ մեր քայլերուն ձայնէն՝ իրենց երկար ականջները կ'անկեն՝ և ցանկերէն ոստոստելով իրենց որջը կ'վազեն : Վերստին կ'տեսնեմք Բէրին իր ձիաւորի մոգուսէ գգալով , սպիտակ փետուրը վրան , և նէրա կ'հանդիսիմ ինչպէս որ առաջ հանդիպեր էի , այն նահապետական ծառերուն ներքեւ որ հիւսիսային ծառուղին կ'շրջապատեն : Այիշեմ այն իրկունն երբ ծառատանին դռնէն դուրս ելնելով՝ դռնապանին կնոջ կողմէ օրհնենք առի և այն տարօրինակ երազը տեսայ . այժմ երազն աւելի իրական կ'երևի քան թէ իմ կեանքս : «Աստուած օրհնէ քեզ» ըսաւ կինը վերստին :

«Այո , պառաւ աիկին , Աստուած օրհնեց զիս» և ոսկի մը կ'նետեմ ներս , չէ թէ իբրեւ սարդեւ , այլ իբրեւ սարտք :

Ինչպէս աղաբակապանն՝ նոյրպէս երէցը կ'դանեմ անդ , և ամենուն բերնէն Գէրին գոլկեստը կ'լսեմ : Սակայն որչափ որ Հին անտառներ , յիշատակներով լի , տարափին վրայ երեկոյեան վերջալոյսն որչափ որ զմայլելի են՝ պարտաւոր ենք Հելվէտիայի լեռներն երթալ : Անդ սիւնի դանենք Ղաւրէնսը :

Գէրին տեսած չէր բնաւ Հուրայի փառաւորութիւնը , և որովհետեւ Տօլի բլուրներուն վրայ կ'ուղեւորինք՝ նշմարելով բոլորաձեւ բարձունքն մայրի ծառերով ծածկուած՝ և բիւրաւոր ոտք խորութեամբ ստորին վայրերը կ'նկատենք , հիւղերու տանիքն , կանաչազեղ հովիտներն , ուր սև խաշկնք կ'արածին հանգարտ , Գէրի սքանչալով կ'սքանչանայ : Ի վերջէ՛ Վէքս փոքրիկ քաղքին վերեւ՝ այն կատարը կ'հասնինք , ուսկից կ'նշմարես համապիւռ ժընէվան շրջապատող դաշտերը , Ղէման լճին վճիտ երեսն և Սալուայի ժանտատեսիլ և ապառու՜մ լեռները . իսկ յետուստ՝ իր սառնապատ սարով և մութ կատարներով հորիզոնը պատուող Մօն-Վլանը :

Գարօլինին կ'ցուցնեմ՝ ստորեւ հովտի մէջ՝ Փէրնէյ փոքրիկ քաղաքը , ուր Վօլքէրի թափուր դղեակը կ'երևի , և հեռուն՝ լճին ափերուն վրայ՝ Սղաէլի Հին բնակարանը , և դիմացը՝ Ջրին երեսն իր սպի-

տակ պատերով բեկբեկող տունն՝ ուր Պայրն «Ելլօնի բանտաւորը»⁵ գրեց : Ժընէվայի բաղմաթիւ տուներուն մէջ կ'դիտենք անոր հին մայր եկեղեցին , և բարձր պանդոկներն որ լճին եզերքը կ'շողան : Եւ այն ատեն պատմեցի թէ ինչպէս վարի հովիտն ուղեորելու ատենս , իմ մտածին ապաղայիս վրայ յուսաբեկ , այս շքեղ տեսարանը կ'վայելէի իմ միայնակ և մննակերպ կենաց իբրեւ սփոփում :

Դիսկ հիմակ , Գարօլլին , հիմակ որ ձեռքդ ձեռացս մէջ սեղմնր եմ , սիրող սրտիս մէջ , այս վարի արեափայլ և հանդարտ լճակը , և այն սառնապատ լեռներն վարդազոյն նշոյլներով՝ Բնութեան ժպտին կ'նմանին , որ մեզի ուրախ լինիլ կ'հրաւիրեն :

Լաւրէնս Ժընէվա է , Գարօլլինը կ'ընդունի նա , ինչպէս պիտի ընդունէր քոյր մը : Ազնիւ երիտասարդ մ'է , և շատ կ'գովէին անուշ իտալացի կինն , և զիս կ'ներկայացնէ , ժպտուն , պատկառոտ Էնրիքային : Նէ այժմ դիտէ անկիարէն լեզուն : «Ես լաւագոյն դասատու մը դոտայ , կ'ըսէ նէ ինձ , քան զքեզ» : Նէ ջերմագին , իբրեւ քոյր մը կ'ընդունի զիս , և կրակարանին առջև երբեմն մեր անցուցած դիշերնէս ըուն վրայ կ'խօսի , ինչպէս կ'խօսին աշակերտներն իրենց դպրոցի դասերուն և դասատուներուն վրայ : Չէ կարող նէ ուզածին չափ Լաւրէնսն և անոր ազնիւ սիրտը զովել : «Գու լաւ էիր» կ'ըսէ ինձ «բայց Լաւրէնս լաւագոյն է» :

Քէրի կ'դմայլի ներս խարտեշ , փափուկ մազերուն , ներս մութ կապոյտ աչերուն , և կ'զարմանայ թէ ինչպէս Հռոմէն հեռանալու կարող եղեր եմ :

— Միթէ իրօք կ'զարմանաս , Քէրի :

Եւ միտին դէպ 'ի Սափուա կ'ուղեորինք , այն հիանալի հովիտն որ Մօն-Պլանի թեւին ներքև կ'դանուի . ապա Մէր Կլափի (սառոյց ծով) վրայ թափառեցանք և սառնալեռին եզրներէն Ալպեան վարդեր քաղեցինք : Երեկոյին Մեծ Սէն-Պէրնարի մեհաստանն ելանք , ուր նորակազմ սառոյցն անձուկ շաւղին վրայ կ'բեկանի և պղլ լուսինն լայնածաւալ ձիւնին և մթաղոյն հիւրատան պատուհաններուն վրայ կ'նշուղէ : Գարձեալ կրօնէքէ բարձանց վրայ ենք , որոց եզրերը ձիւնով լի են , և Կրիմէլի վրայ կ'նային : Լճակը մութ ու սառ է , ճամբաները սահուն . Արի սառնալեռն ձիւնախառն քամի մը կ'փչէ , և արձազանքն ժպտէ ժպտ կ'հնչեն որպէս թէ սառոյցի աստուածը կ'պատասխանէր : Եւ սակայն մենք ոչ կ'տառապինք և ոչ կ'երկնչինք :

Մէլրիմէնի սիրուն հովտին մէջ Լաւրէնսէն կ'բաժնուինք , նա հիւս

սիսային կողմը կ'դիմէ , Կրինտէլվալտի և Թունի վրայէն , ուսկից ան-
ընամտեան կողմը զարնելով ուլկիանոսէն պիտի անցնի և Հռոմայեցի օ-
րիորդին տուն տեղ պիտի պատրաստէ : Էնրիքա կ'յորդորէ զիս Հռոմ
դնալ , նէ դիտէ որ Քէրի աւելի պիտի սիրէ անոր անուշ և տաքուկ օ-
դը , աւերակներն , պատկերներն ու տաճարները քան թէ Հելվէտիան
իր ցուրտ ձորերովը : Եւ նէ բարեւներ կ'ուղարկէ իր մօրն և Կէսարէի
համար , և կ'ինդրէ յիշել զինքը՝ եթէ երբէք Ջաստին Հռոմ մնանք ,
երբ Միգէրէրէն մտիկ ընելու երթանք , երբ հայրենեացը բլուրները
շրջինք :

Անոնց ետէն կ'նայինք՝ մինչդեռ սեպաձև լեռն 'ի վեր կ'երնեն՝ ու-
րու վրայ կ'թափի որոտաձայն Ռիչէնպախի փրփուրը , և անոնք իրենց
ձեռքը կ'օրօրեն դէպ 'ի մեր կողմն և կ'անհետան փոքրիկ լեռնադաշ-
տին վրայ որ բխրեղեայ Ռօզէնլօի և բարձր ու անդորր Էնձէլ-Հօր-
նէրի կողմը կ'տարածուի :

Թող լեռներու հրեշտակներն զսնունք պահպանեն :

Մինչդեռ մենք Սբլունձէնի սքանչելի անձուկէն կ'անցնինք՝ կ'յիշեմ
բլուրներու և ձորերու մէջ՝ այն վայրերն ուր թափառեր էի տարիներ
առաջ , աստ ծաղիկ մը քաղեր էի , անդ՝ սառնալեռին ցուրտ ու գե-
ղին ջրէն խմեր էի , աստ՝ ելեւջ լեռներու պարին վրայ նայող ժայռի
մը զլուին , որոնք իրենց մշտապէս սառցոյցով միշտ սպիտակ են , նստեր
էի խորհելու այն Ապագային վրայ որ Այժմ ինձի հետ է : Բայց եր-
բէք , նոյն իսկ այն միջոցին որ լեռնային պարիկներն մոլորեալ ուղեորիս
ամենէն աւելի նպաստաւոր կ'երևէին , չէի ակնկալած այսչափ խնդու-
թիւն , կամ լաւադայն հրեշտակ մը :

Ի վերջէ դէպ 'ի հարաւ կ'ուղենք մեր ընթացքը , կ'անցնինք Գօմօ-
յէն և կ'հասնինք Միլան : Քէրի Վէնէտիկ տեսնել կ'փափաքի . այս
քաղքին ջրային փողոցներն ու պալատներն իր երեակայութեան մէջ
ընդ երկար ծածաներ էին : Մեր բնիկ հայրենեաց անդուլ գործունէ-
թեան մէջ , և Անկլիոյ հանգարտիկ դաշտերու մէջ , Ագրիականի վրայ
դանուող տարօրինակ , կէս մ'ամայի մայրաքաղաքն իր միտքը զրաւած
էր :

Այսպէս Բատվան և Վէրոնան մեր ետեւը կ'թողունք և դարնան
կէսօր մը՝ ինքզինքնիս այն երկաթէ ճամբուն ծայրը կ'դանենք որ Լա-
կունէն մինչև Վէնէտիկ կ'տարածուի : Երբ շողին մարդուն ականջին
մէջ կ'սուլէ՝ դժուարին է մտածել այն հրաշալի քաղքին վրայ որու կը
մօտենանք : Բայց երբ կառքէն իջնելով այլանդակ , դադաղի նման :

երկաթէ քթով Հին հաւակի մը մէջ ոտք կ'կոխենք, և քանի վէնէտիւն-
ցի թխավարին ներդաշնակ լեզուին միտ կ'դնենք, քանի մեր առջևը
պարզող հոսանուտ դաշտին վրայ՝ արեւուն փաշիւղը քառակուսի բարձր
աշտարակները կ'տեսնենք, բրդային կատարներով և բաղմախումբ
գմբէթներով, և շքեղաշէն բնակարաններ որ մարմարէ պատերէ վեր
կ'սլանան — բոլորն ալ Հին պատկերներու յարեւման — քանի փոքր առ-
փոքր մօտենանք՝ ծածանող հրաշալի քաղքին, մեր այժմ լուակաց թի-
ավարին լոյն թիակին ուժովը, քանի արագաշարժ կ'սահինք պալատ-
ներու լայն ու մութ ստուերներու ներքեւ, և նեղ դետեր կ'մտնենք որ
բարձրադիր պատերէ կ'հովանաւորին, և ուրիշ աղմուկ չլսելով բայց
միայն ձայներ, կամ ջրին բոխումը տոններու դէմ — այն ատեն կը
նշմարենք քաղքին ներկայութիւնը: Եւ Անցեւորյն խորհրդաւոր մա-
տերն՝ մեր ողիները բռնելով՝ կ'սանի հեռուն կամաւոր և խնդումներս
դերիններու սէս, այն հին դարերուն որ այլ ևս չկան:

Քէրի կ'յափշտակուի, այս հմայելի տեսարանին առջև կ'երազէ:
Այս է իր Վէնէտիլը, որ իր երեակայութեան մէջ ունեցած նկարը կը
դերադանդէ:

Փոքր առ փոքր հմայքն իրական, կենդանի քաղաք մը կ'դառնայ որ
անուշ տեսիլներով մեր սիրտն ու երեակայութիւնը կ'հրապուրէ: Ի-
տալական ջերմ արեւուն՝ կ'թափառինք և կ'դիմենք այն սանդուղն ուս-
կից դլորեցաւ ողբալի Մարինո Գալիէօի ալեզարդ դլուխը: Անու-
շիկ Քէրին այժմ կարող է իր մերկ ձեռքն սոսկալի Առիւծին բերանը
մղել: Ահարկու Տանից սրահը կ'մտնենք, և կիսբաց դռնէ մը աւելի
ահարկու Երից դահլիճը կ'սահինք: Գարմանիօլայի և Գարարայի խո-
րունկ դուբերէ կ'անցնինք, և թխավարին կ'ապսպրենք որ իր մթադոյն
հաւակն Հառաչանաց Կամրջին կողմը քշէ:

. . . Ա'հաւեմ, ուրիշ բան չլսելով այլ միայն հաւաքարին թիակին
շարժումն, կամ Զէբա անուշ ձայնը, արագընթաց կ'սահիմ այն պալա-
տին դռան ներքեւ որ այս սոսկալի առաւօտ Պիանքա Գաբէլլօի ոճին
ու ամօթը փափեց: Եւ կամ խանդաղին ողւով, որ հազիւ իրականը
գրականէն կարող է որոշել, ընկեցիկ Գօրինային անձկալի քայլը կը
տեսնենք, կամ հնաշէն ապարանաց մէջ ծեր Պրատանդիօին հիւրն,
Տէզդէմօնայի սենեակը, Եէսիքայի տունը կ'որոնենք, և հրէայ լու-
մայափոխներու մէջ, որ տակաւին Ռիալտօն կ'աճախեն, մօրուսաւոր
Շայլօքի պատկերը կ'փնտռենք: Ա'պտըտինք հոյակապ եկեղեցիներ,
բակերու մէջ աճող վալարի խոտերուն և ապրիմ մեռնիմ ծաղիկներուն

վրայ կոխելով, և զանոնք աամուկ և տխուր կ'դռնենք, խունկը կը բարձրանայ մթաղոյն և խորաններուն ու պատկերներուն վրայ իբրեւ խիտ ամպ կ'զազարի. երդեհոնի երաժշտութիւնն արքաղին է և ողբալի :

Դէպ 'ի Լիւսօ շրջան մ'ընեւէն ետեւ՝ երեկոյեան դէմ՝ թե թեի մաած Գարօլինին հետ՝ այն մեծ հրապարակը կ'ըլմենք որ Ս. Մարկոսի պալատին առջև կ'տարածուի : Արծաթէ դուռնի պէս՝ սպիտակ լուսինն երկնից միջևը կ'սահի, նաւաւարներն հնչական քարերուն վրայ կ'ձեմեն, և իրենց երկար սև տոռերնեմն՝ սալարկին վրայ տարածուելով՝ կամ շարժուն ջրերու վրայ երերալով՝ իբրեւ դամբանական փետուրներ կ'երևին՝ Վէնէտիկ դադաղին վրայ ծածանող :

Այս վայրերէն մոտծութեան և երեսակայութեան անբաւ զանձեր միասին առնելով՝ որպէս զի ապաղայ տարիներու մէջ որոճանք, մեր քայլը դէպ 'ի Հռոմ կ'ուղղենք :

Միականի դասատուն կ'տեսնեմ, և սիրուն Խորիքայի մայրը մտերմական սիրով զիս կ'ընդունի : Կոմսն Անքճնա ուղևորեր էր : Ծաղկեմ վաճառներն խիտ փառաւոր փունջ մը կ'յօրինեն Հռոմի նորեկ զեղեցկութեան մը համար : Գարօլինի կ'պատմեմ իմ ուղևորութիւնս Ապէնինեան լեռներն : Գարնան երեկոյ մը Քրաքարդիի և Ալպանօի մէջ գտնուած բարձունքը կ'թափառինք, և արեւմտեան կողմը նայելով՝ Կամպանիոյ շքեղ տեսարանը կ'նշմարենք, որ անմոռանալի է : Բայց անդր քան Կամպանիա, անդր քան Ս. Պետրոսի յաղթ շէնքն՝ երկնից հորիզոնին վրայ կ'տեսնենք, կամ տեսնել կ'երեսակայենք՝ ծովուն մէկ նշմարն որ կ'սփռի դէպ 'ի այն երկիրն զոր քան զՀռոմ աւելի կ'սիրենք : Եւ մտովին կ'շինենք այն յարկն որ 'ի դարձին մեր տունը պիտի լինի, տուն մ'որ ապաղայի մէջ ընդ երկար թաղուն մնայ և հիմակ որ ապագան հասաւ, իմ աչքիս կ'ընծայի զեղատեսիլ :

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Ըստ երեւոյթին տարիներ անցան, կեանքն հատուն դործելով : Եւ անդ, փոփոխութիւն և հրատապ փառասիրութիւնն կարծես թէ սահեցան գալին : Անդորր ու զուարթուն հանգստութիւն մը յաջորդեց : Այն ապագան որ դեռ ևս իմ աչքիս կ'պարզի՝ վարդաղոյն արշալուսոյ պէս՝ խաղաղաւէտ և լուի զիշերուն մը կ'վերածի :

Իմ հայրենի տունս հիւղմ'ե Զապէլի բնակած հիւղին մօտ : Նոյն

Հովիտն իմ շուրջն է . նոյն առուն խօխոջելով կ'սողոսիկ հովանաւոր
ծառերու կնճռուտ արմատներուն քովէն : Հիւզն վատ հիւղ մը չէ ,
այլ հաստատուն , ընդարձակ , երկար քիւերով և շատ հովանիով —
այն հիւղերու նման զոր Տէվճնի տաքափներու վրայ կ'շինեն : Որժերն
անոր վրայ կ'մաղլին , և քարերն լօռուտ կ'երևին : Յաճ կամարակապ
գաւիթներ կան , կակուղ թեւաթուռներով . նոյնպէս գեղեցիկ ածուներ
որ լի են ասորեակներով և նորածիլ մանիշակներով :

Ծխնեղայններն բարձր կ'երևին և կ'փայլին հոծ թեղոշներու մէջ ,
որոնք ձմերային հովերէն մեղ կ'պահպանեն : Աղաւնոցն բնիկներով լի
է , և ծիրանի վիզով աղանիներ խմբովին կ'դուրդուրան տանիքին բո-
լորտիքը : Սպիտակ գծիկն՝ ցանկին երկայնքը ծլելով իր անուշ բուր-
մունքը կ'սփռէ , և ուղիները հարթ են և մաքուր : Թուփեր և զանա-
զան տունկեր գեղանկար կ'երևին գալարուտ արօտին վրայ :

Աւարի թաւուտին մեծ գուռն երկու մամուռ հին քարի միջևն է ,
և անդ կ'երևի բարձր մոլախինդ մը , ահալին թեղօշի մը մօտ , իբրև
պահանջորդ : Հիւղին մէջ՝ բնիկ կաղնիէ շինուած է զբքատունս , ու
իմ հաւատարիմ հրաքանս եղջերուի զոյգ մ'եղջիւրներու ճիւղէն կա-
խուած է : Իմ կարթս ու վարմն զբքատան դարակներուն վրայ դրուած
են , և յաղթ արծիւ մը , երբեմն բնիկ անտառներու հիւրն , կեդրոնա-
կան ներհեկին վրայ թառած է : Գիւղական վառարանին շրջանակին
վրայ ցիր ու ցան կ'երևին ճամբորդութեան զրեանք , Հռոմէն եկած
պղնձէ մանր տաճարներ , Տրէզնայէն յախճապակէ անդրիններ , և
Հռենոսի մօտ՝ Սև Անտառի մէկ եղջերուի եղջուրէն յօրինուած թաս
մը : Առու աթուռներ աստ անդ դրուած են՝ հրապուրելի կերպով .
կաղնի սեղանի մը վրայ սփռուած կ'մնան օրուան նոր զրեանց հատոր-
ներ , և առիւծի մորթի մը վրայ՝ կրակարանին գէմը պառկած է ուրիշ
Գրէյ անուն շուն մը : Բայց գեռ ևս ուրիշ բաններ ալ կան : Երեսներ
կան հիւղին մէջ : Օհանիկի մ'ունիմ — մեզի աղւոր կ'երևի , վառն զի
իր մօրն սեւաթոյր գէսն ունի , նոյն սև աչուները , երկայն ու խիտ արա-
սանունքով : Ունիմ նաև Գարօլին մը , փոքրիկ Գարօլին պարտիմ ա-
նուանել զանի , ուրախ զուարթ , կայտառ ու վարդ գէմքով . ասկից
զատ երկու տարեկան լակոտ մը կայ , որու Պօղ անունը կ'տանք —
շատ չարաճճի աղելի մը , ինչպէս որ կ'ըսենք :

Մայրն առաջուան պէս գեղանի և աւելի սիրելի է ինձ , վառն զի՝
տարուէ տարի երախտադիտութիւնն մեր սէրը սաստկացուց : Պատա-
հած են պարագաներ՝ երբ իմ մէկ ծանր խօսքս՝ զոր տաղտուկ դործե-

բու ժամուն արտասանած եմ, Գարօլինի սիրտը վիրաւորած է, և տեսած եմ աչքն արտուրբով լի, և ասլա ինքզինքս մեղադրած եմ որ ներս այս ցաւը պատճառեցի: Բայց այսպիսի բաներ չյիշէր նա, կամ եթէ յիշէ մի միայն իր անուշ անյիշաչարութեամբը պարտըկելու համար է: Լօրէնս և Էնրիքս մեզի մօտ կ'բնակին: Եւ ծերունին՝ որ Գարօլինին կնքահայրն էր, արեւային օրեր ինձի հետ կ'նստի դաւիթը, և փոքրիկ Պօղն իր ծնկաց վրայ առնելով՝ կ'հիանայ որ աշխարհիս երեսը Էնրիքային և Գարօլինին նման էակներ կ'գտնուին . . . : Երբ իմ տունէս հեռանամ՝ կարծեմ թէ կեանքէս հեռու կ'մնամ: Իսկ ներս մտնելու՝ այն ընդարձակ ու շքաւոր տպապան՝ որ մանկութեան ու պատանեկութեան ժամանակ իմ առջև կ'պարզուէր, երջանկութեամբ լի է, նուրբ մշուշի մը պէս որ բիւրեղեայ կաթիլներու կ'փոխուի:

Իսկ երբ հեռանամ՝ այն երկար նամակներն՝ որ իմ հայրենի տանս թուականը կ'կրեն, զիս կենաց զօդող կապերն են: Իմ սիրեցեալ կիներ, որ այժմ աւելի սիրելի է ինձ քան առաջին գիրը դժած ժամանակը, որ իմ և ասպաղայիս մէջ սե վարագոյր մը կ'թուէր, այժմ առաջուան պէս դորովանօք կ'գրէ: Իր քնքուշ ոճով՝ բոլոր առանին դործերը կը պատմէ, կ'նկարագրէ ինձ բրած պտոյաները, խաղերն և նորատունկ ծառերը: Ա'խօսի ինձ թէ ինչպէս Օհաննիկ ուսմունք կ'սորվի, ինչպէս փոքրիկ Գարօլին օրէ օր կ'մեծնայ ու կ'ծաղկի, ինչպէս Պօղը — իր հօրը պատկերը — չարութիւններ կ'ընէ: Եւ ամենուն կողմէ համաբոյրներ կ'առաքէ ինձ և այնպէս մաղթանք և այնպէս «Աստուծոյ օրհնենք» կ'թափէ գլուխս որ կարծես թէ հրեշտակ մը զիս կ'պահստանէ:

Բայց դեռ ըսելիք ունիմ. վասն զի Օհաննիկ իբրեւ յետ դրութիւն քանի մը տող դժած է. — «Սիրելի հայր» կ'ըսէ նա «մայրս կ'պատուիրէ ինձ գրել թէ ինչպէս դասերս կ'ունիմ: Ինչ պիտի ըսես, եթէ 'ի դարձիդ տեսնես որ փրանսերէն կ'խօսիմ. իրաւ որ կ'ուզեմ շուտով դառնաւ. դժուրները կ'ծաղկին և իմ պատուհանին ներքեւ ծիրանի բողբօջներով լի է: Եթէ ինձ ընծայ մը բերես, ինչպէս միշտ կ'բերես, պիտի կարթի եղէգն մը խնդրէի:

«Գու սիրական որդիդ

«ՕՀԱՆՆԻԿ»

Եւ փոքրիկ Գարօլին ևս իր բարակ՝ թափառիկ դիրն ունի իբրեւ երկրորդ յետդրութիւն. — «Ինչո՞ւ համար չես դառնար, պապա:

Գու շատ երկար ատեն կ'մնաս դուրսերը . երկու անգամ մտրուկը հեծայ . անգամ մը քիչ մնաց վար պիտի նետէր զիս : Այս զրոյն է

ԳԱՐՕԼԻՆՍ

Պօղ ևս զրիչն առեր է , և խոշոր Պ մը զրեւու համար քողը ճիւղը թափելու ատեն , խոշոր բիծ մ'ըրեր է : Եւ Օհաննիկ անոր տակը կ'զրէ . «Այս Պօղին դործն է , պա» քայց կ'յաւելու թէ «Սիրոյ բիծ մ'է , միայն տասն հարիւր անգամ աւելի կ'սիրէ քեզ» :

Եւ վերադարձիւ Օհաննիկ պիտի սնգէ որ միասին առուակն երթաւ , և մացառուտ զետափը նստելով՝ կարժը ջուրը նետես , թէ և խածան ձկունք (roach) խորը կ'խաղան : Գործաւորներուն ապստրած ես որ զետափի ուռններուն կոճղերը խնայէ որպէս զի վայրի բազն ձմեռն սպասսպարան մը դանէ , և կարաւներն զարնան ժամանակ բոյն շինելու հանգարտ վայր մը դանեն :

Երբեմն կինդ՝ որ բարի լինելուն չմերժեր քեզի այս շնորհը , քեզի հետ արտերու եղերքը կ'շրջի և դու զարնան ծաղիկներ կ'ժողվես մարդերէն 'ի յիշատակ հին ժամանակաց : Փոքրիկ Գէրին ծաղիկներէ բոլորաձև փունջեր կ'յօրինէ որպէս զի Պօղին ճակատը դարգարէ , և միասին պար կ'բռնեն արօտներու վրայ , վայրի նարգէս (daffodil) կը խլին և եղերգներու (dandelion) հունտերը կ'փչեն որպէս զի փորձեն թէ իրենց փափաքը պիտի լրանայ . թէ ոչ : Օհաննիկ կողի աման մը կ'բռնէ Գարօլինի ծնօտին ներքեւ՝ տեսնելու համար թէ արլեօք ոսկի կ'սիրէ , և Պօղ , չարաճճի որդիս , զանոնք կ'բարկացնէ քոջը դանդուրներուն մէջ փուշի կտոր մը մղելով :

Մտրուկին վայն 'ի դուխը կ'դայ Գարօլինին շուտ շուտ քալեցնելովը — քայց Գարօլին իր ձեռօքը կ'խնամէ կենդանին և անոր կ'տայ իր սլաղ նախաճաշիկը : Ժամանակին կ'հաւաքեն ընկոյզներն և ձմերուս յին երկայն զիշերներուն համար կ'ամբարեն , երբ կրակը սլայծաւ և զուարթ կ'վառի , և իր նշոյլներն կայտառ , ծիծաղիտո՞ղ գէմբերու վըրայ կ'ծածանին , նոյնպէս առլի զրեանց դարակներու և սիրական կենդանաղիկներու վրայ : Իսկ՝ այն կինն՝ որ այս առանին տեսարանին հողին է , աղքց թրթրակ լեզուին վերջ կ'տայ իր գաշնակ ձայնով՝ որ կը թռթռայ քանի մ'երդերու կամ վէսերու վրայ . . . :

Ապա տղայք կ'սկսին այլ և այլ խաղեր խաղալ , և Դրէյ շունն ու Միլօ կատուն՝ առիւծենիկն վրայ՝ կրակարանին դիմացը՝ մօտ առ մօտ կ'նստին : Փոքրիկ դեղձանիկն՝ իր վանդակին մէջ կ'ննջէ , կամ աչքը

կ'բանայ կրակի մէկ յանկարծական ճարձատունէն՝ և մեր ընտանեկան խմբին վրայ ընտանի ականարկ մը կ'ներտէ :

Բայց չկայ ասպաղայ մ'առանց մուսլի, և հիմակ իսկ դաշտանկարին վրայ ստուեր մը կ'տատանի :

Ամառնային անուշ և սիրուն օր մ'է : Տունկերն բոլորովին ծլած ծաղկած են : Հարաւային քամի մը բոլոր առտու կ'փչէր հովտին վրայ և թեթև մշուշն հեռուոր լեռներու ծերպերէն կ'կախուի՝ իբրև դեղեցիութեան քօղմը : Օհաննիկ դասերով դադելէն ետև՝ դաշտին մէջ կ'խաղար Միլօին հետ . փոքրիկ Բէրին երկար պտղոյտէ մը դարձեր էր՝ երեսը վարդեր բացուած և աչերն ժպիտներով և խնդութեամբ վառ : Մայրն իր սիրած ծաղիկներով պարապելու վրայ էր . իսկ փոքրիկ Պօղ ինչպէս որ ըսի, մարդին մէջ կ'խաղար, և ծեր Գրէյ անոր հետ զայեր էր :

Բայց ճաշի ժամանակ Պօղ տուն չէր դարձեր :

« Պօղ այնքան հեռու տեղեր դացած չպիտի լինի, կ'ըսեմ ես : Մայրը բան մը չըսեր, բայց իր դիմաց վրայ անձկութեան նշնյւլ մը կայ որ զիս կ'վրդովէ : Օհաննիկ կ'հարցընէ թէ Պօղ ո՞ր կրնայ լինիլ, և անոր սիրած բաներն ափէի մը մէջ դնելով կ'պահէ . տակայն ճաշի ժամը կ'անցնի և Պօղ չերևիր : Երբ Գրէյ դաւիթն արևուն նստած է :

Մօրն հողն երթալով կ'շատնայ, և ես թէև չեմ յայտնեմ, ահ ու դողով կ'պաշարուիմ : Բնադրում մը զիս դէպ 'ի մարդը կ'մղէ, առուա-կին կողմը կ'թափառիմ կոչելով . « Պօղ, Պօղ » բայց պատասխան չկայ :

Բոլոր կէսօրէն վերջը՝ կ'փնտռենք, դրացիներն ալ ասդիս անդին կը փնտռեն, բայց անօղուտ բան : Այն իրկուն տրտմութիւն կ'տիրէ տան մէջ, լուռ ու մունջսեղան կ'նստին տղաք . փոքրիկ Բէրին կ'հարցընէ միայն՝ արտասուալի աչք թէ Պօղ ե՞րբ պիտի դառնայ, բոլոր դիշերը կ'փնտռենք և Պօղը կ'կոչենք . մայրն գիշերային ցուրտն առ ոչ ինչ գրելով՝ այսք անգը կ'վազմզէ մինչև որ առաւօտ կ'հասնի և մեզ տրտում ու յուսահատ կ'դանէ :

Այն օրն — հետեւեալ օրն — գաղտնիքն երևան կ'երևէ, բայց մեզի սև լուր մը կ'րերէ : Եղևիկ փոքրիկ Պօղ . առուակին ջրերուն մէջ իր գերեզմանը գտեր է . իր մանկային լեղուն, իր վարդային ժպիտներն մեզի համար 'ի սպառ կորան : Չպիտի ըսեմ թէ ինչպէս և երբ զտանք զանի, և ոչ մեր առանին յուսահատութիւնն, ոչ նէրա վիշաղ պիտի նկարագրեմ — իր կենաց առաջին վիշտը :

Մեր հիւզն հանդարտ է : Ծառաներն անշշուկ կ'սահին՝ որպէս թէ կ'վախնան որ փոքրիկ ննջողը չարթւնցնեն : Տունը սաղ կ'երևի — շատ սաղ, և սակայն ամուռ է, մարդագետին երեսը հարապին քամին հեղիկ կ'բուրէ, հեղիկ կ'բուրէ առուակին մահատու ծփանայ վրայ : Յետոյ կ'սկսի թաղման շշուկը : Բարեսիրտ աշխարհներն անդ են, գիւրին է իրենց համար եղբայր, պատուական երկըր զաղաղին մօտ կ'աղօթէ . . . :

Շաբաթներ կ'անցնին, և համբերատարութեան ժպիտ մը մօրը տրտմալին դէմքը կ'լուսուորէ : Այն սև սուգի շրջադիտաններն աւելի աղլու կ'խօսին սրտին, և հարսենական հաղուստն քան զառաջինն աւելի կ'աթողին : Քու տրտմութեանդ բեռը փաքր ինչ կ'թեթեւցնէ իր երկայնամիտ անուշ խօսքերով . «Աստուած առաւ մեր որդին» կ'ըսէ նէ : Ուրիշ շաբաթներ ալ կ'սահին կ'անցնին : Գեռ ևս ուրախութեան օրեր կան — մեծ և հասուն ուրախութիւններ : Գարնան արևուն՝ դեռ զածիծաղ երևոյժ մ'ունեցող հիւզն անդ է, թռչուններն թառուանելու մէջն են . Օհաննիկ և փոքրիկ Քէրին անդ են, և այն էակն, որ զեր 'ի վեր է քան զամենքը, խնդու մերս է և դո՛հ : Դրկին մեզուայց որ ամենէն սոյժառ ապագան իր ամպերն ունի — թէ այս կեանքն լուսներու և ստուերներու պիտակ մ'է : Եւ երբ մեր բոլորը գտնուող աշխարհին վրայ, և մարդկային բազմազան թշուառութեանց վրայ նայինք՝ մեր խորին չորհրդաւորութեան մէջ խնդու թիւն մը կ'ծագի :

Յարի մը կ'անցնի, և մեր տնակին վրայ տրիշ մօտայ մը չձգեր : Ուսուերն կ'աճին ու կ'բողբոջին, կաղնիներն կ'սառարանան և կ'բարձրանան . փոքրիկ Քէրին աղջկութեան հասակը կ'մանէ, և Օհաննիկ իր սև մաղերով և բոցալժառ աչօքը իր մօրը պարծանքն է : Մեր անգործութեան արատ բերողը միայն խեղճ փոքրիկ Պօղին յիշատակն է : Եւ նոյն իսկ այս յիշատակը տարիներէն նուիրապործուելով՝ աւելի շնորհատուր յիշատակ մ'է թէ մեր կեանքն այս աշխարհի համար չէ միայն, քան վիշտ մ'որ մեր սրտերու վրայ կ'ծանրանայ :

Երբեմն փոքրիկ Քէրին և Օհաննիկ իրենց խաղին թողլով՝ երեկոյն կ'թափառենք ուռենիին կողմն՝ որու ներքեւ մեր գետամայն որդին կ'ենջէ մինչև ցիւրջին Յարութիւն : Արևակի մ'է, մեր կենաց միջօրէին մէջ, փոքրիկ գերեզմանին մօտ գեղեցիկն, մահաբաժանին վրայ ծաղիկներ սփռելն և աղօթք մը փսփսալն որ մեր փոքրիկ Պօղն հանդիստ ննջէ Անոր ծոցն որ մանկալին սիրէց :

Եւ ներս սիրան ու իմ սիրաս, իրարու վշտով կ'ապուամ, ինչպէս որ

կապուած էին խնդութեամբ — արծաթէ թել մ' ոսկիին խառնուած —
կ' ճետելի մեռնողին դէպ 'ի այն Նրկիրն որ մեր առջին է . մինչև որ
վերջապէս տղեկը նոր բնակարանը պիտի գտնենք , բնակարան մ' որ
երբ այս Տիննայ , մերն այ պիտի լինի : Եւ խմորիս , անոր որոյն ճետ
խօսելով երեկոյեան հսկումներու ատեն՝ կարծես թէ խնդապին կ'ըսէ ,
այնքան խնդապին որ արտասուքս կ'իջդէն — « Պճշ , որդեակս , մենք
ալ անոր պիտի դանք » :

Եւ մայրն՝ երեսն ինձի դարձրնելով՝ որպէս զի իր արտասուալի աչ-
քը տեսնեմ , և անոր երկնային ակնարկը դիտեմ , մեղմիկ կ'հառաչէ
— այնքան մեղմիկ որ հրեշտակ մը կարող է ըսել — « Այո , սիրելի ,
անոր պիտի դնանք » :



Արդէն զիշերն հասաւ , և կաղնիներուն ներքեւ իմ օրս լընցաւ :
Սակայն ծիրանի փայլ մը դեռ ևս կ'տատանէր հորիզոնի վրայ , թէև
աստղերն ելեր էին :

Առուակին երեսն իսկա մշուշ մը տարածուած է : Ծառին քովէն
հրացանս առի , և ապա Գարլոն կուչեցի սուլելով՝ որպէս թէ Գրէյն
լինէր , և կամուրջէն անցնելով՝ կնձնիներու ներքեւ զտնուող իմ սնա-
կիս ճամբան բռնեցի :

Այն իրիկուն զմայլելի երազներ տեսայ — վասն զի տեսայ որ իմե-
րազս իրական էր :

ՎԵՐՋ